281.6
Ա-22

Avag shabat'

ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

ԲՈՎԱՆԴԱԿ

ՀՈԳԵՆՈՒԱԳ ՊԱՇՏՕՆԵՐԳՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՐԱԴԱՐԱՆ

Մկրտիչ Ն. Ազարեան
Դասատուի

1918

Azarian
18917

Rev. Shahé Semerjian

GIFT



Ս Բ

Խանդավառ Մայր իմ

ՇՈՒՇԱՆ ԱԶԱՐԵԱՆ,

Նուրս Անթառամ Յիշատակին

Յաւէտ Վշտակիր ՈՐԴԻ,

Վաստակաւոր Մամոյ

ՄԿՐՏԻՉ Ն. ԱԶԱՐԵԱՆ

1918

ԹՐՕՑ, Ն. Ե. ԱՄԵՐԻԿԱ

ԱԶԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

209 - 9 th Street - - Troy, N. Y.

ԽՈՍՏՍՏԱ ԱՐԱՐՈՂԻՆ

Ք. — Օրհնեալ Տէր մեր Յս. Քս. ամէն։

Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։

Ս. — Օրհնեալէ Աստուած։

Ք. — Տէր եթէ զչրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։

Ս. — Օրհնեալէ Աստուած։

Ք. — Օրհնեալ համագոյ և միանամեայն անբաժանելի Սբ. Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի Սբ., այժմ։

Ս. — Եւ եւս յաւիտեան։

Ք. — Օրհնութիւն և փառք։

Դ. — Տէ՛ր, զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չի՛ք փրկութիւն սորա առ Աստուած իւր։

Այլ դու Տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և իքուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է։

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա, այք շուրջանակի պատեալ պաշարեալ պատհէին զիս։

Սրբի՛ Տէր և փրկեա՛ զիս, Աստուած իմ՝ զի դու հարեր զամենեսեան, այք էին ընդ ի թշնամութեամբ ի տարապարուց, եւ զատամունս մեղաւորաց փշրեացես։

Տեառնդ է փրկութիւն՝ ի վերայ ժողովրդեան քո, օրհնութիւն քո։

Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի ի գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեացի ունկն քո ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձ իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի և ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս որք ննջեն ի գերեզմանս

Զորս դու ո՛չ յիշեցեր, նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ի գբի ներքնումն ի խաւարի և ի ստուերս մահու։

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ո՛չ երանէի, աչք իմ ակա-
րացան յոգքառութենէ:

Ազաղակեցի առ Տէր զօրհանապարգ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ:

Միթէ մեռելոց առնիցե՞ս սքանչելիս քո
կամ բժիշկք յարուցեալ խոստովան առնի-
ցին առ քեզ:

Միթէ պատմեսցէ՞ ոք երբեք ի գերեզ-
մանի զողորմութիւնս քո, կամ ղճշմար-
տութիւնս քո ի կործանեան:

Միթէ ճանաչիցե՞ն ի խաւարի սքանչելիք
քո, կամ արդարութիւն քո յերկիր մո-
ռացեալ:

Եւ առ քեզ Տէր աղաղակեցի, առաւ-
օտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ
դարձուցանես զերեսս քո յինէն:

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկու-
թենէ իմմէ, ի բարձրութենէ խոնարհեցայ
և ապշեցայ:

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, ար-
հաւիրք քո խռովեցուցին զիս:

Շրջեցան զինեւ որպէս ջուր, զոր ամե-
նայն պաշարեցին զիս ի միասին:

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և
զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ:

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և ամենայն
ոսկերք իմ, զանուն սուրբ նորա:

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, և մի մոռա-
նար զամենայն տուրս նորա:

Ո՛ քաւէ զմեզս քո, բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։

Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ. և գթութեամբ։

Ո՛ լնու ի բարութենէ զ ցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոց։

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր։

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։

Ո՛չ ի յապառ բարկանայ մեզ, Տէր, և ո՛չ յաւիտեան պահէ ոխս։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացէ Տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զառեղծուածս մեր և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Ընչէ ինքնա հողմ, և ո՛չ է, և ո՛չ եւս ետրեւի տեղի նորա։

Բայց ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս։

Այք պահեն զուխտս նորա, յիշեն ըզպատուիրանս նորա և առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ, այք առնէք զբան նորա իլսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն գործք նորա, զի ընդ ամենայն տեղիս տէրութիւն նորա, օրհնեա անձն իմ զՏէր։

Տէ՛ր լուր աղօթից իմոց, ունկն դի՛ր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում,

զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ ։ նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Զանձրացաւ յիս հոգի իմ սիրտ իմ խըռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ:

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն, նըմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ի գուբ:

Լսել ի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր, կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղու-

թենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա՝ զթշնամիս իմ ։ կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր, եւն.։

ԵՐԳ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍԻ

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր։ Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո, ի մէջ նոր Երուսաղէմի։

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր։

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր։

Ալ.— Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք և ես զարթեայց առաւօտուց։ ալէլուիա։

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերին Սիոնի։ ալէլուիա։

Զարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնու-

թիւն Հօրն լուսոյ. ալէլուիա։

Զարթի՛ք փրկեալք արեամբ, և ազատք զփրկող ին. ալէլուիա։

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգող ին. ալէլուիա։

Զարթի՛ք, հաստատեալք հոգւով, սպասեալք զալոյ սուրբ փեսային. ալէլուիա։

Զարթի՛ք, վառեալք լուսով, ըստ իմաստուն. սուրբ կուսանացն. ալէլուիա։

Զարթի՛ք, պատրաստեցէք իւղ լապտերաց զՔրիստ արտասուս. ալէլուիա։

Զարթի՛ք, և մի՛ ննջէք, նմանք յիմար կուսից, նիրհէք. ալէլուիա։

Զարթի՛ք, երկիրպագցուք, և արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա։

Փ.— Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես, Տէր, մի՛ մերժեր զմեզ խսպառ։

Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, ասացուք անուանդ քում զփառս։

Այժմ և յաւէտ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ամէն։

Փ.— Զարթուցեալքս, ի զբաղմանէ զիշերային Հանգատենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր ի միխիթարութիւն և ի սփոփանս եկեղեցւոյ։

Ահիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս։

Եկեալ խառատանեցու՛ք զյանցանս։
Եւ զոցու՛ք ի Քրիստոսէ զքաւութիւն
և զմեծ զողորմութիւն։
Յաւիտեան յաւիտենից ամէն։
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Գ 18917

ԵՐԳ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍԻ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ
իս լոյս ծագեա։ Բղխումն ի հօրէ, բղ-
խեա ի հոգւոյս, բան քեզ ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան, գանձիդ ծած-
կելոյ, գաղդ դիս արա։ Գուռն ողորմու-
թեան, դաւանող իս բաց, դառեցո՛ վերս-
նոցն։
Երբեակ մխութիւն, եղելոց խնամոյ, ե-
ղիր ողորմեա։ Զարթիր Տէր յօգնել,
զարթո՛ զթամրեալս, զուարթնոց նմանիլ։
Էդ Հայր անսկիզբն, Էակից Որդի, Է
միշտ Սուրբ Հոգի։ Ընկալ զիս զթած,
ընկալ ողորմած, ընկալ մարդասէր։
Թագաւոր փառաց, թողութեանց ար-
ար, թո՛ղ ինձ զյանցանս։ Ժողովող
բարեաց, ժողովեա և զիս, ժողովս ան-
դրանկաց։
Ի քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ինձ թժշկութիւն։ Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս։

Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր։ Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա լոյս փառաց։

Կենարար Փրկիչ, կեցո զմեռեալս, կանգեա զգլորեալս։ Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով։

Զայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա։ Զամբարամբ լուսոյ, զեկաւար ճարտար, զողեալս ամրացո։

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս։ Մխածինդ Հօր, մոյծ զիս յառագաստս, մաքուր հարսանեացդ։

Յորժամ զաս փառօք, յահագին յաւուրն, յիշեա զիս Քրիստոս։ Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն։ Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, որ վասն եմ ի սուգ։

Զար մշակողին, շար սերմանց նորին, որացո գպտուղն։ Պարգեւիչ բարեաց,

պարգևեա իմոց, պարտեացս թողութիւն։

Զուր շնորհեա աչացս, զերամ հեղուլ զարտօսր, զնչել. գյանցանս։ Ռեմինք քաղցու, ոամ հոգւոյս արբո, ոահ-ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմրեա, սիրտս իմ քարեղէն։ Վասն զթութեան, վասն ողորմութեան, վերատին կեցո։

Տենչալոյդ տեսլեամբ, տուր ինձ յապենալ, Տէր Յիսուս քրիստոս։ Բաբունք երկնաւոր, բոտեա զաշակերտս, բամից երկնայնոց։

Ցող արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս, ցնծացսէ անձն իմ։ Խիւծեալս մեղօք, խիւծեալ ազաչեմ, սիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց։ Քաւիչ յանցանաց քաւեա զօհնաբանս, քեզ երգել զփառս։

Աստուածածին բարեխօսութեամբ յիշեա, Տէր ողորմեա։



ԵՐԳ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍԻ Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ

Աշխարհ ամենայն, առ իս նայեցեալ,
սխրատակից լերուք։ Բանամ զշրթունս,
բարբառիմ լեզուաւս, բողոքեմ զանձնէս,
Տէր ողորմեա, Տէր ողորմեա Տէր ողորմեա։

Գոգ եղէ մեղաց, գտող կարօտեան,
գութ ինձ փորեցի։ Դաւեցի զանձն իմ,
դաւաճանեցի, զարան զօրծեցի, Տէր ո-
ղորմեա, ելն։

Երբեմն էի լոյս, և այժմ եմ խաւար,
եւ սուեր մահու։ Զխարդ պատմեցից,
զթիւ մեղաց իմոց, զի բազում են յոյժ,
Տէր ողորմեա, ելն։

Երկինք և երկիր, եկայք ողբայէք, եղ-
կելի զանձն իմ։ Ընտրեցի զչարն, ընտ-
կալայ կամաւ, զհոյլս մեղաց, Տէր ո-
ղորմեա, ելն։

Թաթաւիմ ողմով, թաւալիմ ի մեղս,
թօթափիլ չկարեմ։ Ժանտախտս լցեալ,
ժահահոտ եղէ, ժամանակս բազում,
Տէր ողորմեա, ելն։

Ի քաց մեկնեցայ, ի սաւրբ խորհրդոց, ի բարեաց գործոց։ Լաւ վարկաւ անձն իմ, յաւուրն հեռանալ, լինել ընդ խաւար, Տէր ողորմեա, ողն։

Խորհուրդ էրբ շարին, խաբեն զհոգիս, խորտակել առնեն։ Ծածկեն անդնդօք, ծածուղ ին զլարմամբս, ծանակ զիս առնեն, Տէր ողորմեա, ելն։

Կամաւ կրաց, կարեցայ, կարկամեալս անձամբս կանգնել ո՛չ կարեմ։ Հաւր մեղաց կիզոց, հրդեհեաց որ յիս, հոգեւոր բարիս, Տէր ողորմեա, ելն։

Զաղկեցայ մեզոք, ձաղեցին ուեղք, ձանձրացաւ հոգիս։ Ձեզի զառնութեան, զօղեալ ի սիրտս իմ, զամբար իմ շիջաւ, Տէր ողորմեա, ելն։

Ճաչակմամբ մեզաց, ճաչեցի զմահ, ճոխս ողքաւաց։ Մեռեալ եմ հոգւովս, վայրեալ մտօքս, միայն կամ մարմնովս, Տէր ողորմեա, ելն։

Յորոգայթ մահու, յորսողին անկայ, յաղթեցայ յախտից։ Նեռից թշնամւոյն, նշաւակ եղէ, նոր միշտ խոցուիմ, Տէր ողորմեա, ելն։

Շուրջ ոգաւոր զինեալ, շունք բազում եղեն, շաղախին արեամբս։ Որս եղէ շարքին, ուռկանաւ մեղաց, որոցաւ զանձն

իմ, Տէր ողորմեա, ելն։

Զարթաչար վշտօք, շարշարի անձն իմ, չունիմ դադարումն։ Պարտապան գտայ, պարտուց յանցանաց, պարտեալս ի մեղաց, Տէր ողորմեա, ելն։

Զանամ զղջանալ, ջեռանիլ դարձեալ, ջեռնում հրով մեղաց։ Թաքրի կոչեցայ, ռակայ անուանիմ, ռամկական վարուք, Տէր ողորմեա, ելն։

Սիրով ցանկութեան, ատատիկ բարկութեան, սիրտ իմ խոցեալ է։ Վիրօք յանցանաց, վշտանայ հոգիս, վարանեալ շրջիմ, Տէր ողորմեա, ելն։

Տիրեցին ինձ շարք, տարապիր հանին, սիրական գրկացն։ Բարուանուոյն բարոյ, բախճական ձայնին, բոտին ո՛չ լուայ, Տէր ողորմեա, ելն։

Ցանկութիւն չարեաց, ցանկալի դիմօք, ցաւեցոյց զաչս իմ։ Իբրաքանչիւրոց, սիւոմամբ խուռն ախտից, սիւծեալ է հոգիս, Տէր ողորմեա, ելն։

Փութացիր անձն իմ, փախչիլ ի չարեաց, փարիաքիլ բարեաց։ Քեզ միշտ մերձ ծանիր, քուն մահու եկեալ, քնոտ պատուոր, Տէր ողորմեա, ելն։

Ատուածածին բարեխօսութեամբ, յիշեա Տէր և ողորմեա։

Ք. — Զքէն գոհանամք ելն։

Կանոնագրութիւն Կարգաւ ըստ Ութ ձայնից

Ա.Զ. Դատեա՛ Տէր զայնոսիկ, որք դատեն զիս, ալէլուիա։ Մարտիր ընդ այնոսիկ, որք մարտանչին ընդ իս, ալէլուիա։

Առ զզէն և զասպար քո և արի՛ օգնել ինձ, հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, ասիցել զնոսա, և ասա դու զանձն իմ թէ փրկութիւն քո ես եմ, ալէլուիա։

Ամաչեսցին և յամօթ լիցին՝ որք խրնդրէին զանձն իմ, դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ, և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի դայթակղութիւն և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թաղուցին ինձ որոգայթ ապականութեան իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ։

Փ.— Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս, ալէ. ալէ.։

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած, իրաւունք քո որպէս խորք բազում՝ զմարդիկ եւ զանասունք կեցուցանես դու Տէր, ալէ։։

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած, այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց քոց յուսացին։։

Արբեսցին նոքա ի պարարութենէ տանն քո եւ զուրախութեան քո ացեսցես զմարեալ նոցա։։

Ի քէն է Տէր ակնաց, եւ լուսով եղեսցուք զքոյ տեսանելիս զլոյս։։

Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո ոյք ուղիղ են սրտիւք։։

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, եւ ձեռք մեղաւորաց մի՛ դողացուցցեն զմեզ։։

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն, մերժեցին եւ այլ մի՛ կարացեն հաստատել։։

Փառք Հօր։ Այժմ եւ միշտ։ Ալէ։ ալէ։։

Ամ.— Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ո՛չ գոյ Աստուած, ալէլուիա։ Ապականեցան և պղծեցան յանօրէնութեանց իւրեանց, և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն, ալէլուիա։

Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱստուած, ալէլուիա

Ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան։

Ո՛չ ոք է որ առնէ կբարի, և չէ ոք մինչեւ ի մի։

Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան որք գործեն զանօրէնութիւն։

Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, և առ Աստուած ո՛չ կարդացին։

փ.— Զի ո՛չ գոյր նոցա փոխանակ, և ո՛չ երկեան յԱստուծոյ, ալէ., ալէ.։

Զգեաց զձեռն իւր ի հաստուցանել նոցա և նոքա պղծեցին զօրէնս նորա։

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա, և եհաս ի սիրաս նոցա։

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեան որպէս սլաք։

Ընկեա՛ ի Տէր զհոգս քո և նա կերակրէ զքեզ, և ո՛չ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։

Դու Աստուած ինչուացեր զնոսա ի գուր ապականութեան, որք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հաստատեցեն զաւուրս իւրեանց, այլ ես ի քեզ Տէր յուսացայ։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.։

Բն.— Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան, ազատիր զիս։ Յարդարութեան քում փրկեա և ապրեցո զիս, ալէ.

Խոնարհեցո առ իս զունկն քո, և կեցո՛ զիս։

Եր իմ Աստուած ապաւէն, և տեղի ամրոց կեցուցանել զիս, զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես։

Աստուած իմ, փրկեա՛ զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անօրէնի և անիրաւի

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ։

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ։

փ.— Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա, ալէ., ալէ.։

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի,

զաղքատն և զոնանկն, որոյ ոչ է իւր օգնական։

Անխայեսցէ նա յաղքատն և ի տնանկն, և զանձինս տնանկաց կեցուսցէ ի վաչխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա։

Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տացի նմա յոսկւոյն արաբացւոց։

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհնանապազ օրհնեսցեն զնա։

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց։

Բարձրացի քան զԼիբանան պտուղ նորա, և ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ առնէ սքանչելիս միայն, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան, լցցի փառօք նորա ամենայն երկիր եղիցի եղիցի։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ։

Բկ.— Զողորմութիւնս քո Տէր Յաւիտեան օրհնեցցի, ալէլուիա։ Ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով, ալէլուիա։

Ասացեր թէ աշխարհս ողորմութեամբ շինեցի, յերկին պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո։

Եղբ ուխտս ընտրելոց իմոց, երդուայ Դաւթի ծառայի իմոյ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո և շինեցից յազգէ յազգ զաթոռ քո։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց։

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ, կամ ո՞վ նմանիցի Տեառն յորդիս Աստուծոյ։

Փ.— Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա, և ո՛չ ընկալար զնա ի պատերազմի, ալէ., ալէ.։

Անարգեցեր զսրբութիւն նորա, և զաթոռ նորա յերկիր կործանեցեր։

Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հեղեր զնովաւ զամօթ։

Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո խաւար, բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո։

Իսկ արդ յեշեա՛ և տե՛ս թէ ո՛վ է իմ հանգիստ, միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան։

Ո՞վ է մարդ որ կեցցէ և ո՛չ տեսցէ զմա՛ռ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձառաց դժոխոց։

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տէր առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով։

Յիշեա զնախատինս ծառայի քո, զոր ընկալայ ի ծոց իմ յազգայ բազմաց։

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախատեցին փոխանակ օծելոյ քո։

Օրհնեալ Տէր Աստուած յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.։

Գծ.— Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, ալէլուիա։ Զի յաւիտեան է ողորմութիւն նորա, ալէ.։

Ո՛ խոսեսցի զ զօրութիւնս Տեառն, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա։

Երանի ոյք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւն յամենայն ժամ։

Յիշեա զմեզ Տէր ընդ հաճոյս ժողո-

վրդեան քո, և այց արա մեզ ի փրկութեան քում:

Տեսցո՛ւք մեք զքաղցրութիւն ընտրելոց քոց, ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո, և դովիցուք մեք ի ժառանգութեան քում:

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք:

փ. — Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա, և խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա, ալէ՛, ալէ՛:

Բազում անգամ փրկեաց զնոսա, և նոքա դառնացուցին զնա ի խորհրդս իւրեանց, և կորացան յանօրէնութեան իւրեանց:

Հայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա, ի լսել ձայնի աղօթից նոցա:

Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում, եւ եա զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա:

Փրկեա՛ զմեզ Տէր Աստուած մեր, և ժողովեա զմեզ ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ,

և պարծեցուք յօրհնութիւնս քո։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, յաւիտեանս յաւիտենից։

Եւ ասացէ ամենայն ժողովուրդն, եղիցի եղիցի։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.։

Գկ.— Արարի իրաւունս և արդարութեան ալէլուիա։ Մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց ալէլուիա։

Ընկալ զծառայս քո ի բարի, զի մի՛ ամբարտաւանք զգուեսցեն զիս։

Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր, և բանից արդարութեան քում։

Արա՛ ընդ ծառայի քում Տէր, ըստ ողորմութեան քում զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։

Ծառա քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զՏէր, խափանեցին զօրէնս քո։

Փ.— Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս, ալէլուիա, ալէլուիա։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր և

բանիւ քո փրկեա զիս։

Բղխեացեն շրթունք իմ զօրհնութիւնս յոլովամ ուսուցեա ինձ զարդարութիւնս քո քս։

Խօսեացի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քումդ Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ, խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Այէ. այէ.։

Դհ. — Օրհնեա անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի կեանս իմ, այէ.։ Սաղմոս աստուծոյ իմոյ՝ մինչեւ եմ ես, այէ.։

Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան, զի ո՛չ գոյ փրկութիւն ի նոսա։

Ելցէ հոգի ի նոցանէ և դարձցին, անդրէն ի հող, և յայնմ աւուր կորիցեն ա-

մենայն խորհուրդք նոցա։

Երանի՝ ազգի որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա, և յոյս նորա ի Տէր Աստուած է։

Ո՛ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա։

Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւիտեան, և առնէ իրաւունս զրկելոց։

փ. — Գովեա Երուսաղէմ զՏէր, ալէ.։

Եւ օրհնեա զԼաստուած քո Սիօն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ո՛ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն, զարարութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ բնթանան զբանքն իւր։

Դնէ զձիւն որպէս զսար և զմէգ որպէս փոշի ցանեաց։

Արկանէ զսառն որպէս զպատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կենալ։

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շընչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն, և զիրաւունս Իսրայելի։

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.։

Դկ.— Սիրեցից զքեզ Տէր զօրութիւն իմ, ասէ։ Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ, ասէ։

Աստուած օգնականն իմ, և ես յուսամ ի նա, ապաւէն իմ եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է։

Օրհնելով կարդացից զառ Տէր, և ի թշնամեաց իմոց ապրեցայց։

Շուրջ եղեն զիս ցաւք մահու, և ուղիք անօրէնութեան խռովեցուցին զիս։

Վիշտք դժոխոց պատեցին զիս, և ժամանեցին ինձ որոգայթք մահու։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։

Դ.— Զգեցուցեր ինձ զօրութիւն ի պատերազմի, և դյուրացեալն ի վերայ իմ ներքոյ իմ արարեր, ասէ. ասէ։

Զթշնամիս իմ հալածականս արարեր և զատելիս իմ ոտակեցեր։

Աղաղակեցին և ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա, կարդացին առ Տէր և ո՛չ լուաւ նոցա։

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ, և որպէս կաւ գռեհաց կոխեցից զնոսա։

Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ

ժողովրդոց, և կացուցանէ զիս գլուխ հեթանոսաց։

ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայեաց ինձ։

Որդիք օտարաց ստեցին ինձ, որդիք օտարաց մաշեցան և կազացան ի շաւղաց իւրեանց։

Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած և բարի եղիցի Աստուած փրկութեան իմոյ։

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։

Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ որք յարուցեալ են ի վերայ իմ բարձր արարեր զիս. և յառնէ յանիրաւէ փրկեցեր զիս։

Վասն այսորիկ՝ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասասցից։

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա, առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա Դաւթի և ընդ զաւակի նորա յաւգէ մինչեւ յաւգ։

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ., ալէ.։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԱՏԱՆ

ՍԱՂՄՈՍՔ ԸՆԴ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ Ի ՏԷՐՈՒՆԻ ԱՒՈՒՐՍ

Երկ ամ է առ գայլ

Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում՝, կամ՝ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում։

Որ ո՛չ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ո՛չ արար։

Նախատինս ի մերձաւորաց նա ո՛չ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Զերկիւղածս Տեառն փառաւորէ առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ատէ։

Զարծաթ իւր ի վարձու ո՛չ տայ, և կաշառս ի վերայ իրաւանց ո՛չ առնու, որ զայս արասցէ նա մի՛ սասանեսցի յաւիտեան։

Սարսռա ամ. Տէ՛ր, մի՛ արամարութեամբ քով յանդիմաներ զիս և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ և դու Տէր մինչեւ յե՞րբ։

Դա՛րձ Տէր և փրկեա՛ զանձն իմ, կեցո՛ զիս ակն ընդ ողորմութեան քումմ։

Զի ո՛չ ոք է որ ի մահու յիշէ զքեզ, կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ, ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ ես արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ի սրամտութենէ ակն իմ, մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից իմոց և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի։ և խռովեսցին։

Սարոնա ակ. Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս և ո՛չ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս, Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ և փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ։

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա, և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։

Սրամտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիւք, առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում թէ ո՛չ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո եռուր դեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն և ես եղէ խռովեալ։

Առ քեզ Տէր կարդացի և առ Աստուած իմ աղաղակեցի, զի՞նչ օգուտ է յարենէ իմմէ թէ իջանեմ ես յապականութիւն։

Միթէ հող խոստովա՞ն առնիցէ առ քեզ կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, եկերծ յինէն զքուրձ և ինձ զգեցոյց զուրախութիւն:

Որպէս սազմոս ասասցեն քեզ փառք իմ, այլ մի՝ եւս զղջացցոյց. Տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ:

Յաւելու բն. Աստուած յանուան քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւարա ինձ:

Աստուա՛ծ, լուր աղօթից իմոց, ունկնդի՛ր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց:

Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունող հոգւոյ իմոյ,

Ի դարձուցանել զչարն ի թշնամիսն իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա:

Եւ կամովք իմովք պատարագս մատուցից քո՛ զ, և խոստովան եղէց անուան քում Տէր զի բարի է:

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ եսես ակն իմ:

Սաղմոս Բկ. Աստուած ողորմեա՛ մեզ և օրհնեա զմեզ, երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգինս ամենայն զփրկութիւնս քո:

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն:

Երկիր եւ զպտուղ իւր, և օրհնեացց զմեզ, Աստուած Աստուած մեր:

Աստուած մեր օրհնեացէ զմեզ, և ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի:

Սաղմոս Գձ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո:

Դա՛րձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ զսրտմտութիւն քո ի մէնջ:

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչեւ յազգ:

Աստուած դու դարձեալ կեցուսցես ըզմեզ, և ժողովուրդք քո ուրախ եղիցին ի քեզ։

Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։

Լուաք զ ի՞նչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր և առ այնոսիկ ոյք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակիլ փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն և երկիր մեր տացէ զպտուղ իւր, արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։

Սաղմոս Գկ. Տէր՝ լուր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։

Հարայ իս, որպէս խոտ և ցամաքեցաւ սիրտ իմ, մոռացայ ուտել զհաց իմ՝ ի ձայնէ հեծութեան իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալատան անապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհասնապաղ, և զովիչք իմ ինեւ երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու Տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո յազգէ մինչեւ յազգ։

Դու յարուցեալ գթացցես՝ ի վերայ սիոնի ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

Սաղմոս դ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր և բանիւ քո փրկեա՛ զիս:

Բղխեսցեն շրթունք իմ գօրհնութիւնս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութիւն քո:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են:

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ցանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին:

Կեցցէ անձն իմ որ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ:

Ի Տէրունի աւուրս եթէ ձայնն ղկ. է, ասա զայս

Դկ. Ի խորից կարդացի առ քեզ, Տէր Տէր, լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր Տէր, իսկ ո՛ կարէ գալ առաջի քո զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի Տէր, համբեր անձն իմ բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ երեկոյ, ի պահէ յառաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նոցա:

Սաղմոս Դկ. Տէ՛ր, լուր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով:

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի

քում, զի ո՛չ արդարոյն ասացի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհս արար յերկիր զկեանս իմ, և նստուցց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտս իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո, յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուազեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցանիր զերեսս քո յինէն, նմանեցայի՛ ացնոցին, այք իջանեն ի գուբ։

Լուսաւորեա՛ սրտս ինձ ասասցես զարդարութիւն քո, զի եւ ի քեզ Տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ, յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի ի քեզ ապաւէն ինձ արարի։

Սովո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր կեցուցեա զիս, արդարութեամբ քով հանցեա ի նեղութենէ զանձն իմ:

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ:

Զկնի սաղմոսին աւետարան և ապա երգ ըստ ձայնի:

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Բկ. Դկ. Ասուած անեղ, անժամանակ, Հայր անսկիզբն և անքանակ, որոյ պատճառ ծննդեամբ անճառ, Հոգւոյն բղխմամբ անքննաբար, ապաչեմք զքեզ գթած, երկայնամիտ և ողորմած, ողորմեա քո ստեղծուածոյս՝ յուսով ի քեզ ննջեցելոց:

Բանդ որ ի ծոց Հօր միածին, և կերպարան սկզբնատպին, որով երկինքք գոյացան աշխարհ լրիւ հաստատեցան, Հայցեմք ի քէն Տէր և Փրկիչ ամենողորմ և կեցուցիչ, ողորմեա, ելն.:

Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւո-

բաց և երկրայնոց, կեանք և կենաց տը-
ւողջ հոգի, Հօր և Որդւոյ արարչակից,
խնդրեմք ի քէն աղբիւր բարեաց արբու-
ցանողդ ծարաւեաց, ողորմեա, ելն.:

Բ՛ն. դ՛ն. Ժողովեալքս ի հրաժարումն
ծառայի քո յաշխարհէ, հայցեմք ի քէն
արտասուելով և պաղատիմք զայս ասե-
լով, ճանապարհ ընդ քեզ ելից՝ հանգու-
ցեալոյս լեր ուղեկից, ի յօթեւանս Հօր քո
լուսոյ զննչեցեալսն մեր հանգո:

Ի փրկութեան մերոյ սկզբան մկրտե-
ցար ի Յորդանան, զոր չնորհեցեր նոր
աւազան ի մաքրութիւն մեղաց մարդ-
կան, հայցմամբ կրկին կարապետին մե-
ծին ի ծնունդս մկրտչին, ի յոդեւանս
ելն.:

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ դա-
ւանեաց հայր էակից, աղաւնակերպ հո-
գին ինքեալ առ համագոյդ իւր հանգուց-
եալ, զմկրտեալս նովին հոգւով յորդե-
գրութիւն հօր հաւատով, ի յօթեւանս
ելն.:

Ամ. զկ. Ճանապարհ մոլորելոց և ճառագայթ խաւարելոց, հրաւիրեցեր զորդիս լուսոյ ի յերկնային հարսանիս քո, ընդ զուարճալից անդ ժողովոց, արժանացո զսա դասուց, Լի լապտերօք մոյծ յառաջատս ընդ խմաստուն սուրբ կուսանացն։

Մերով բնութեամբ զոր զգեցար ի փայլս խաշին բեւեռեցար, լուծանելով զմեզ ի մեղաց ի նախահօրն կապանաց, լոյծ և զսա ի յանցանաց վասն քո սուրբ շարշարանաց, Լի լապտերօք ելն։։

Յետ կամաւոր մահու խաչի եդար ի նոր գերեզմանի, երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ստեղծեր զմեզ կենդանի, զիջեալս ընդ քեզ ի հող մահու, վերադարձեա ձայնին փոդոյ, Լի լապտերօք ելն։։

Ամ. Գծ. Ոահ գործեալ երկնաւորաց՝ զան առաջի քո նախընթաց, զընտրեալս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով, ընդ աղաւնեաց օդապարիցդ խառնեա զսա սուրբ երամից, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ դասարթնոցն։

Սարսափին տարէրք յերկրի՝ յորժամ փառօք գաս Հայրենի, արեգական լոյս խաւարի լուսին աստեղբքն նուազին, գաս յաւուն աներեկի լուսաւորեա լուսով քոյին, դասաւորեա ելն.:

Վերնական զօրացն պետ փողէ բարբառ աւետաբեր, արիք մեռեալք որք յԱդամայ քանզի ահա եկն փեսայ, ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կարգեա զսա ի թիւ սրբոց, դասաւորեա ելն.:

Դն. Ի վերին Երուսաղէմ, ի բնակարան հրեշտակաց, ուր Ենովք և Եղիա կան ծերացեալ աղաւնակերպ, ի դըրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս ողորմած Տէր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց:

Թագաւոր փառաց Քրիստոս որ ժամանեալ գաս ի յերկնից ի վերայ թեւոց հողմոց քո Հայրենի կերպարանօք, և առնես հրաւիրձութեամբ զքննութիւն որդւոց մարդկան, ողորմած ելն.:

Ուրախացան ազգքք մարդկան յորժամ լուան զքո յարութիւնդ, նորաւիեաուր զարդարեցան ի յարութեան սուրբ միածնիդ, ողորմած ելն.:

ԱԼԷԼՈՒՅԱ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԷԻՑ

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

Ա.ձ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան։ Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Ալէ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։ Փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ։

Ալէլուիա

Ակ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ և ահարկու, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Ալէ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.

Ալէլուիա

Բձ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան առելիք նորա յերեսաց նորա:

Ալէ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.:

Ալէլուիա

Բկ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ: Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Ալէ. Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանունն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաստ հետէ մինչեւ յաւիտեան:

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.:

Ալէլուիա

Գձ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

Ալէ. Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն: Զի զօրա-

ցոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.։

Ալէլուիա

Գկ. Օրհնեցէք մանկունք զՏէր և օրհնեցէք զանուանն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Ալէ. Կենդանի է Տէր, և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։ Աստուած է որ խընդրէ զվրէժ իմ և հնազանդ առնէ ըզժողովուրդս ընդ ինեւ։

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.։

Ալէլուիա

Դձ. Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիոն։ Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ալէ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձեալ և ահարկու։ Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Փառք և երկիրպ. Այժմ և միշտ. Ալէ.։

Ալէլուիա

Դկ. Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։ Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։

Ալէ. Ծարս հարէք ամենայն հեթանոսք, ազազակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձեալ և ահարկու թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Փառք և երկիրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան։

•II•

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան։

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան։ Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն։ Ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան։

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. ի յայսմ հետէ մինչեւ ի յաւիտեան։

Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, և փրկեա՛ ըզմեզ, վասն անուան քո։

Արի՛ և մի՛ մերժեր զմեզ խապառ, վասն անուան քո։

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան՝ Աստուած քո Սիոն, յազգէ յազգ։ Օրհնեա՛, անձն իմ զՏէր, օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ։

Ս. Օրթի՛։

Ք. Խաղաղութի՛ւն ամենեցուն։

Դ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Ս. Երկիւղածութեամբ լուարուք.

Ք. Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթ.

Դ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր։

Ս. Պռօսխումէ՛։

Դ. Ասէ Աստուած։

Փառք յարութեան քո, Տէր ո՛չ դադարեցայց Քրիստոս օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Փառք յարութեան քո, Տէր, ոչ դադարեցայց Յիսուս, գովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդա-

նութեան իմոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր։

Զամենայն ամենայն ժառայք Տեառն՝ զՏէր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր։

Լուսապայծառ հրեշտակն նստեալ ի կենաւոր գերեզմանին։ Եւ ասէր կանանց. յարեալ Աստուած։

ԵՐԳ ԵՊԼՈՒՀԵՍԻ

ԿԻՐԱԿԷՍԻՆ

(երիցս կրկնեա՛ և զյետին բարձր ասա)

Զամենայն աւուրս կենաց իմոց, եւ ո՛չ դադարեցայց օրհնել զքեզ, Քրիստոս, փրկիչդ աշխարհի։

Զամենայն աւուրս։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զտէր։

Ամա՛ն օրհնեցէք ամենայն ժառայք Տեառն, զտէր ի սրբութիւն և օրհնեցէք զտէր։

Գալստեան. Դասք լուսեղէն զուարթնոցըն սպասէին մեծի գալստեան Տեառն: Եւ երգէին երգ նոր, օրհնեալ է քո սուրբ գալուստդ:

Հաւքարձեան. Համբարձէ՛ք իշխանք, զդրունս ձեր ի վեր: Եւ գայ մտանէ փառօք ի փառս:

Հոգեգալստեան. Իջեալ Հոգին յառաքեալսն և հրեղինեաց զընտրեալսն անկեղծ ի սուրբ վերնատունն, և հանգեաւ նոքօք յազգս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ:

Վարդավառ. Ցնծայ թագիր Հերմոնիս, և առաքեալքն ի հայրական ձայնէն թրմրեալք: Եւ կենդանեաց և մեռելոց տէր ծանուցին զքեզ Մովսէս և Հեղիա:

Խաչ. Այսօր եկեալ կամաւ Տէրն ի խաչ, և տարածեաց զբազուկս իւր ի նմա:

Ծնունդեան. Հայլք հողեղէնք ընդ հովիւսըն քարոզէին ի յանբանից մըսուր ըզբանըն բազմեալ: Եւ մոգքն աստեղքն դուշակեալ մատուցին զընծայսն խորհրդոյ:

Տեառնընկալաց. Քառասնօրեայ տղայ և Տէրն օրինագիր տնօրինաբար եկն ի տաճարըն։ Եւ Սիմէօն զգուէր գբրկօքն. և յօրինաց կապից լուծումն հայցէր ի կեանըս աւետարանի։



ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, իմարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառացդ քոց։ Տէր թագաւոր սուրբ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և որդի հօր միածին, Յիսուս Քրիստոս և սուրբդ որդի։ Տէր Աստուած, Գառն Աստուծոյ և որդի հօր, որ առեր զմեղս իկուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի, և արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ

Հոր, ողորմեաց մեզ: Զի դու որ միայն սուրբ, դու միայն բարձեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ հօր. Ամէն

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր, և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից: Արժանի արա Տէր, զօրս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահեա զմեզ: Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն: Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երիցս կրկնեա) Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես ասացեմ, Տէր, ողորմեա՛ ինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ: Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տո՛ր մեզ: Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտեսանիր: Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ: Ի քէն է Տէր, աղբիւր կենդանութեան և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր:

Մաղթ. Փառք, պատիւ և երկրպագութիւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ:

Ամ. ակ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Յարեւ Աստուած և ցրուեցան թշնամիք նորա:

Փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Բմ. բկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Զյարուցեալն զՔրիստոս օրհնեսցուք, և զյարութիւն նորա փառաւորեսցուք:

Գմ. գկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Որ ելն ի բարձունս և զերեսաց զգերութիւն. էառ ասար, բաշխեաց պարգեւս և ետ որդւոց մարդկան:

Դմ. դկ Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Որ համբերեաց խաչի և եդաւ ի նորափոր վիմի, և Աստուածային յարութեամբքն զմահացեալսն վերարերեաց ի կեանս:

ԵՐԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն: Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ:

Հոգեգալստեան. Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք. զՀոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգալուստ: Յեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած և զՏէր յաղբերաց Իսրայէլի:

Ծաղկազարդի. Այսօր մտանէ թագաւորն մեր Քրիստոս ի յԵրուսաղէմ նոր քաղաք Դաւթի:

Ընդ առաջ ելին ծերքն ասուավք ձիթենեօք, և զԱստուածորդին փառաւորէին:

Արդարամտիցս. Են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր:

Զհիւսիս և զհարաւ դու ստարեր, Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծացեն:

Ծնունդեան եւ Աւետեաց. Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցողէ յերկիր.

Աստուած զիրաւունս քո արքայի տուր և զարդարութիւն քո որդւոյ թագաւորի։

Խաչի. Եռուր երկիւղածաց քոց նչան, զի ապրեցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աչով քով և լուր մեզ։

Յայտնութեան եւ Տեառնընդառաջի Արեգական արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան, մարդ եղեալ սրբեցեր զչուրս վերածնեալ զմեզ մկրտութեամբքն տրբոյ Հոգւոյն։

Ի վայելչութիւն փառաց սրբութեան քո, ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ, մարդ եղեալ։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ . . . վասն մեր, ողորմեա՛ մեզ։ (Երիցս կրկնեա)։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին, Մարիամ մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որդւոյ քո՝ և Աստուծոյ մերոյ։

ՄԱՂԹ. Փրկեալ զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

ՓԱՐՈՁ Եւ եւս խաղաղութեան զՏէր

աղա։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Եւ խնայելոյ ի վերայ մեր ողորմութեամբ և գթութեան Տեառն Աստուծոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և։

ՍԿԶԲՈՒՆՔ ԱԺԻՐ.

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Օրհնեցէ՛ք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն։

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա։

Ով է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկիր։

Յարուցանէ զաղքատս յերկրէ և բարձրառնէ զտառապեալս յաղբերաց։

Նաստուցանէ զնոսա իշխանս բնոյ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զաստուրն Ի տան աւրհնութիւն, զարդեա մայր որդւովք բնակիւք։

ԵՐԳ ՄԵԾԱՐԱՆԻՆ

Նորատնկեալ բոնն յանէից Ի սկզբանէ զերկինս երկնից, և զերկնային զօրս անմարմնոց խմբանալոցն զաստիրքնոց և զգալի ստեղից բոլոց Հանդերձակաց միասնոյն, զոմ յաւէտ փառաւորեալ Երրորդութիւնն անճառել։

Երեքարարեան մի աստուածութիւն, միով բնութեամբ աստուածութիւն, ոչ որ ասեալ աստուածութիւն ոչ լինել ոչ նոքին, զոր և ծագեաց յօրն ասացին միաչարամիտ կիւրակէին, զոմ յաւէտ փառաւորեալ։

Բարեհաճեալ բացատրեցուցուր, զծածկեալ խորհուրդն ծանեցուր, զի ոչ ասեսցուք խմբանալ, միաբար Հոգւոյ անուանել, Ի սոյն ծագեաց միաչարամիտ մեր յաստուածութիւն ասել Հաստատեալ, եկայք փրկեսցք ընդ զաստիրքնոյն ասեալ օրհնութիւն յարատեւելոյն։

Սէրդ սիրով խոնարհեցար, ի փրկութիւն մեր մարմնացար, նովին մարմնովը բնաչեցար, ի գերեզման մահու եդար, այսօր յարեար աստուածաբար, ի հրեշտակաց քարոզեցար, եկայք փրկ.:

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն կենաց ուրախալից, և ի լերինն Գալիլիա աստաքելոց մեռաւանից, արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին, եկայք փրկ.

Սիոնի որդիք, զարթի՛ք, հարսին լուսոյ տուք աւետիք եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ զայ պսակէ զքեզ փառօք, ել ընդ առաջ պճնեալ զարդուք, երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն:

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Ի ԴԷՄՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Դ. Խորհուրդ խորհին անհաս անակիզ-
բըն, որ զարդարեցեր զվերին պեատու-
թիւնդ. ի յառագաստ անմատոյց լուսոյն.
դերապանծ փառօք զդասս հրեշտինաց:
Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱ-
դամ պատկեր տիրական, և նապելի փա-
ռօք զգեստաւորեցեր ի դրախտն Ագենի
տեղի բերկրանաց: Զարշարանօք քո սուրբ
մրածնիդ, նորոգեցան արարածք ամե-
նայն և վերատին մարդն անմահացաւ,
զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:
Անձրեւածին բաժակ հրահրոսան, որ հե-
ղեր յառաքեալսն ի սուրբ վերնատան,
հեղ և ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած ընդ
պատմուճանին զքո գիմաստուութիւն: Տան
քում վայելէ սրբութինն որ զգեցար զվա-
յելչութիւն, սրբութիւն փառաց ընդ մէջ
քո ածեալ, պատեա զմէջս մեր ճշմար-
տութեամբ: Որ զարարչագործ բազուկս

քո տարածեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ համբարձմաբ ձեռաց առ քեզ միջնորդիլ։ Իբրամամբ թագ ի գլուխ պատեցես զմիտս և զդայարանս, խաչանիշ ուրարմամբ քոս աՀարոմնի ծաղկեալ ոսկեթել ի գարդ խորանին։ Բամից բոլորից տիրապէս աստուածպեսական, նոմիրատապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քեզմ սուրբ խորհրդոյդ լինել ըստաւոր, թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագողս անուանդ քոմ պահեա ի խաղաղութեան։

Ք. Լուացից արբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քոմ Տէր։

Ս. Դատ արա ինձ Տէր, զի ես յանբծութեան իմոմ գնացի, ի Տէր յուսացայ, զի մի եղէց հիւանդ։

Ք. Եւ վասն արքունեաց Աստուածածնին։

Ս. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք աստ Հայր ի յերկինս զի կամեցեալ ողորմեցի և զթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛։

Ֆ. Ընկալ տէր, զաղաչանս մեր բարեխօս։

Յիշեացիր և զմեզ առաջի անմահ Գառնին Աստուծոյ։

Յիշեալ լիջիր առաջի անմահ Գառնին Աստուծոյ։

Դպ. Ազաղակեցէք առ Տէր ամենայն երկիր։

Ս. Սուրբ եկեղեցեաս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց և կեցուսցէ զնորհիս ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա՛։

Ֆ. Ի մէջ սուրբոցս և առաջի Աստուածդն։

Մարդ առաջի սեղանոյ Աստուծոյ սա Աստուած, որ սրբոյս ասէ զմանկութիւն իմ։

Ս. Դուս արա ինձ, Աստուած, և իրաւս արա ինձ ի դատաստանի իմոմ։

Ֆ. Յարդէ որ ոչ է սուրբ ի մարդոյ մեղայ։

Ս. Օրհնեացուք զամենակալն Աստուած, զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի սեղանս սրբութեան, և երգել զերգս Հոգեւորս, ասեմ։

Ֆ. Ի յարկի սրբութեան և ի տեղւոջս փառաց։

Շարական Հնկարկուրթեան Սրբոյ Պատարագիս

Դկ. Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն առաքիս՝ ժողովեալք առատութիւն ի խորհուրդ պաշտաման պաղատանաց առաջակայ Սուրբ Պատարագիս, խնկովք անուշիւք խունկ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս, ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց տաշխից և կինամոմաց, և զմատուցողս պահեա սրբութեամբ միշտ և հանապազ քեզ ապատուրել։

Բարեխօսութեամբ մօր քո և կուսի ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից։ Որ դեռրագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդատս առաքելոց և մարգարէից, սուրբ վարդապետաց, այսօր ժողովեալք դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկո-

սաց, խունկ մատուցանեմք առաջի քո. Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարեայ, ընկալ առ ի մէնջ ըստ խնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու, բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա և այլն:

Ինդա յոյժ դուստր լուսոյ, մայր Սբ. կաթուղիկէ, մանկամբք քո սիօն, զարդարեալ պճնեա Հարսն պանծալի երկնանրման լուսաճեմ խորան, զի օծեալն Աստուած էնն ի յէէն անծախապէս ի քեզ միշտ պատարագ հօր ի հաշտութիւն, մեզ ի քաւութիւն բաշխէ զմարմին և զարիւն իւր Սուրբ, վասն իւր կատարման սուրբ անօրէնութեան, շնորհէ զթողութիւն կանգնողի տաճարիս.

Զանապական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ զեկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարար, տուք օրհնութիւն հոգեւոր երգով:

ՇԱՐԱԿԱՆՔ ԹԱՓՈՐԻ

Ա՛ծ. Կանանցն կանխելով ի թաղումն կենդանւոյն, տեսին զվէմն ի դրանցն ի բաց մերժեալ: Թափուր զդերեզմանն և ունայն տեսանէին և տրտմութամբ լային յուսահատեալք: Մայր խաչեցելոյն զի՞ լաս յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ, յարեաւ:

Բ՛ծ. Զայն աւետաւոր հրեշտակին զբարձացոյց զառաւօտեան կանայսն զՔրիստոսի պատմելով զյարութիւն: Մի՛ յուսահատիք տրտմութեամբ այլ՝ ցնծացէք բերկրելով. խնկազդեացք առտուտծայնոյն և փափաքողք յարութեան:

Գ՛ծ. Տեսիլ փայլակնաձև զուարթնոյն ի վիմին հնչեցեալ առ խնկազդեաց կանայսն, փարատեցոյց զերկիւղալից տրտմութիւնն: Պահապանքն պակուցեալ ահաբեկ լինէին և կանանցն աւետաբանեալ մահ մահու յաղթեաց և ծանուցաւ մահ: Քարոզս առաքելով առ երջանիկ առաքեալսն, փութացարուք ի Գալիլիա և տեսանիցէք զկենագործողն զՔրիստոս:

Դն. Փառաբանակից Հօր Որդի, որ վասն մեր խաչեցար, զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի, փառք յարութեան քո տէ՛ր։ Հրեշտակապետին ինչումն որ զպահապանն երկիւղիւ զարհուրոցոյց առ դրանն գերեզմանին. փառք յարութեան։ Եւ ընդանչելի առաքն կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարուցիչն մեռելոց. փառք յարութեան։

Կանանցն կանխելով ի թաղումն կենդանւոյն, տեսին զվէմն ի դրանցն ի բաց մերժեալ։ Թափուր զգերեզմանն և ունայն տեսանէին և սրամութեամբ լային յուսահատեալք։ Մայր խաչեցելոյն զի լաւ յուսահատեալ, քանզի Քրիստոս փառօք մեծաւ, յարեաւ։

Ս. Օրհնեա տէր։

Ք. Օրհնեալ թագաւորութիւն Հօր և։

Եւ ասի ժամանակս ըստ պաշտամն առարկ

Ս. Եւ եւս խաղաղութ.։ Օրհնեալ տէր։

Ք. Օրհնութիւն և։ Խաղաղութիւն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Ս. Աստուծոյ երկիրպագեցուք։
Դ. Առաջի քո, Տէր։
Ֆ. Տէր Աստուած մեր, որոյ կարողու.

ՀԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ

Ա.Ձ. Զթագաւորն փառաց Քրիստոս որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ կուսէն և խաչի համբերելով, միաբանութեամբ երդով բարեբանեցուք։ Որ զթագուհն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանութ.։ Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց, եկեղեցոյ իւրում զգեցոյց զմեծվայելչութիւն, միաբանութեամբ։

Ա.Կ. Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի, ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած, քանզի

չիցոյց զխոյթոց մոհու խաշխն իւրով արդամ, ժողովուրդք: Յարեալ Աստուած և տիեզերք ամենայն նորոգեալս զարդարութեան և մանկունք Հաղորդեցան մարմնոյ և արեան կենդանարարին, ժողովուրդք:

Գ. Թագաւորին յաւիտենից մատուցեալ զօրհնութիւն որ ի կուսէն մարմնացաւ, հաստատեաց զաշխարհս ի հաստատութիւնսն, փառք նմա յաւիտեան և յաւիտեան: Որ կամաւ Յոտքեր մահու խաշի Աստուած բանն և եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց, փառք նմա: Աստուածատէս յարուցեալ ի նորոյ ի վերին յուսարարեաց զեկեղեցի իւր սուրբ ի փառս և ի զովեստս անուան իւրոյ, փառք նմա:

Բկ. Օրհնութիւն ի բարձունս տնօրինեցելոյն ի կուսէն Թագաւորին մերոյ Աստուծոյ, այլելուիա: Օրհնութիւն ի բարձունս տնտամանելի և հաստատեալ յաւուրսն մերոյ, Ալէ.: Օրհնութիւն ի բարձունս անբաժանելի և միաստուածական սուրբ Երրորդութեանն Ալէ.:

Գձ. Զթագաւորն Քրիստոս օրհնութիւնամբ երգով բարեբանեցէք, ամենայն երկիր։ Սրբարար ելանել և երկրի մատուցաք երգով գոհութիւն ամենայն երկիր։ Երրորդութեանն և մի Աստուածութեանն մատուցաք պատիւ, երկրպագութիւն յաւիտեանս ամէն։

Գկ. Լաւագոյն աստուածութեան քո Քրիստոս, լաւագոյնք սուրբ գեղեցիկ, պահեա զս անշարժ յաւիտեան։ Տօնէ այսօր յերուսաղէմ հաւատացեալդ բարբառեմք զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ, պահեա զս։ Բացան դրունքք հաւատոյ նոր Սիոնի ընդունիլ զանմահ փեսայն յաւարտս, բաշխէ զմարմին քո և զարիւն, Պահեա զս։

Գձ. Թագաւոր Քրիստոս էանիցս Հօր և Հոգւոյն, որ զսան մեր մարմնացար ի սուրբ Կուսէն, թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ զմահ մեռացեր, և անապականն յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհս, թագաւոր փառ։ Որ կենդանարար արեամբդ քո լաւագոյնք սուրբ գեղեցիկ, երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով, թագաւոր փառ։

Դ. Որ անբաւելի յաղթող զօրութեամբ թագաւոր ես երկնի և երկրի փրկիչս Աստուած, օրհնութեամբ զքեզ։ Որ փրաւակցութեամբ ընդ Հօր վերօրհնեալ յանմահից և խոնարհեալ մարմին զգեցար փառաց թագաւոր, օրհնաբա։։

Որ կարապետն զմահ կոխեցեր և յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութեան, օրհնաբա։։

Ս. Օրհնեա Տէր։

Բ. Զի քո է կարողութիւն և զօրութիւն։

Ս. Զոսխուամէ։

Դ. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ։ (Երիցս կրկնեա)։

Ս. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա։

Դ. Տէր ողորմեա՛։

Ս. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցեաց զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա՛։

Ս. Վասն հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) կենաց և երկարութեան հոգւոյ նորին զՏէր ասա՝ :

Դ. Տէր ողորմեա՛ :

Ս. Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք :

Դ. Տէր ողորմեա՛ :

Ս. Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածատէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք :

Դ. Տէր ողորմեա՛ :

Ս. Վասն հոգւոցն Հանգուցելոց որք :

Դ. Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ :

Ս. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ :

Դ. Տէր ողորմեա՛ :

Ս. Զանձինս մեր և զմիմեանս :

Դ. Քեզ Տեառնդ, յանձն եղիցուք :

Ս. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր

Դ. Տէր ողորմեա՛, Տէր ապա՝, Տէր ող

Ս. Օրհնեա Տէր :

Բ. Զի ողորմած և մարդասէր ես :

Գիրքն եր Սահակայ կը կարդացուի

ԱՂԷԼՈՒԱՅԹ ՃՇՄԱՐՏ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ա.Ճ. Դու յարուցեալ դիցես ի վերայ Սիոնի, ժամանակ գիտայ նորա հասեալ է ժամ:

Ակ. Ցրտնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ԲՃ. Ծարս հարէք ամենայն հեթանոսք ապաղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցրնծութեան:

Բկ. Արի, Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ:

Գ.Ճ. Ուրախ եղեալ Իսրայէլ յարարիչ իւր, որդիք Սիոնի ցնծացեն ի թագաւորն իւրեանց:

Գկ. Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդիս մարդկան:

Գ.Ճ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո և դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Գկ. Յարեալ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատե-

լիք նորա յերեսաց նորա։

Գ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻՈՅ

Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց և անտեսանելեաց։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յԱստուծոյ Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին այսինքն՝ յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։

Նոյն ինքն ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և անտեսանելիք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մեր փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կուսէն՝ Հոգւոյն սրբով։

Որով էառ մարմին Հոգի, և միտք դարձեալ ամենայն որ ինչ է ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, երեալ ի յերկի-

նրա նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառաւոր Հոր իւր դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Յորժամ յարեար ի մեռելոց,
Լոյս ծագեցար արարածոց.
Ասեր յարութեամբ քո կենարար,
Յարո՛ զգաս ի կեանս անմահ. Լի՛ բաց։

Զընդանդուրժեալ պահապանացն
Ի յերկիւղէ երկնաւորացն.
Որք աւետիս տային կանանց,
Թէ մահ լուծաւ մահկանացուաց.
Ասա՛ որ մահու քո տրնկակից,
Լիցի կենացդ հաղորդակից. Լի՛ բաց։

Պարակցեալ անմարմնականքն
Ամ կենաւոր սուրբ գերեզմանն.
Տան զաւետիս ազգի մարդկան,
Վասն կենացն յաւէրժական.
Դասաւորեա՛ պարոյց նոցին,
Ընդունջեցեալս յօրրն վերջին. Լի՛ բաց։

Զաղաւորեալ նըշան խաչին,
Յարեւելից փայլեալ ծագին.
Հաւատացեալքն ի քեզ բերկրին,
Եւ ուրացողքն կոծեսցին.
Զերկրաշարժս սրբոյ խաչին,
Պայծառացո՛ լուսով նորին. Լի՛ բաց։

ԱՋ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳՋ.

Ո՜ահ գործեալ երկնաւորաց,
Գան առաջի քո նախընթաց.
Զընտրեալըս քո ժողովելով,
Ֆեց ընդ առաջ բերեն ամպով.
Ընդ աղաւնեաց օդապարից,
Խառնեա՛ ըզոսա սուրբ երամից,
Դասաւորեա՛ զսա վերնոցն՝
Երգել ըզփառս ընդ զբաւարթնոցն։

Սարսափին տարերք երկրի,
Յոր ժամ փառօք գաս Հայրենի.
Արեգական լոյս խաւարի,
Լուսինն աստեղքըն նըւաղին.
Ըզսա յաւուրն աներեկի,
Լուսաւորեա՛ լուսով քոյին. Դասա։

Վերնական զօրացն պետ,
Փողէ բարբառ աւետաբեր.
Արիք մեռեալք որք յԱդամայ,
Ֆանզի ահա՛ եկըն փեսայ.
Ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց,
Կարդեա՛ ըզսա ի թիւ սրբոց։ Դասա։

Տիրական յաթոռ նրատիպ,
Յարարածոց երկրպագիս.
Արդարութեամբ զաշխարհ դատես

Վարձս բան գործոց հատուցանես.
Յայնժամ շնորհեա՛ ողորմութիւն,
Ընկնջեցելոյս մեր թողութիւն. Դաս։

Բամեալ մարդկան ազգ ժողովին,
Որք յԱդամայ ծընեալք լինին.
Եւ հրեշտակաց դասք երկնային,
Համանգամայն վայրաբերին.
Ի յայնմ ահեղ հրապարակին,
Յիշեա՛ զքո յօրն ահագին. Դասա։

Ցուցանին գաղտնիք մարդկան
Իւրաքանչիւր որք գործեցան.
Բարեաց գործողքն պըսակին,
Չարեացն ի հուր անշէջ մատնին.
Յայնժամ յիշեա՝ զտուրա բարին
Գործըք մեզացըն ջնջեացին. Դասա։

Իւսին պըսակք զանազանեալք
Եւ պատմուճանք լուսափայլեալք.
Սուրբ վկայքն ի գլուխ եդեալ,
Եւ արգարոցըն զարդարեալ.
Հաղորդս արա՛ հայցմամբ նոցին
Ըզքո լուսոյ փառաց նոցին. Դասա։

Փառաց ի փառըս բարձրանան
Անջակողմեանքըն վերանան.

Յորժամ լսեն զերանական
Զայն օրհնութեան ի քէն կոչման.
Ներնջեցեալոյս մեր լսեցո՛
ԶԱստուածային բարբառն քո. Դա՛ :

Քահանայք և ժողովուրդք
Հայցեմք ի քէն Տէ՛ր բարեգութ.
Ընդ ներնջեալսն հաւատով,
Ընկա՛լ զմեզ նովին յուսով.
Յերուսաղէմ քաղաք վերին
Յորում արդարքն ժողովին.
Փառս վերերգել միշտ ընդ նոսին
Երրորդութեանդ երբեակ անձին։

ԵՐԳ. ՉՈՐՐՈՐԴ ՉԱՑՆ,

Արարիչ և մարդասէր
Անսխալակալ և բարեգութ.
Որ զովիսդ 'ի սրտամբէից
Տէր զաստուս արդարութեան.
Ընդ սրբոց առաքելոց
Տէր պատկեա՛ զմեր նընջեցեալսն.
Ողորմած Տէր ողորմեա
Հոգւոցն մեր նընջեցելոց:

Յորժամ զբեալքն կատարին
Որ զայնմ աւուր մեզ պատմեցին.
Մարգարէից բանքն յարդին
Առաքելոցըն վրճարին. Ողորմած

Ի վերին Երուսաղէմ
Ի բնակարանս հրեշտակաց.
Ուր Ենոքք և Եղիա
Կան ծերացեալ ազատնակեր.
Ի դրախտին Եդեմական
Պայծառացեալ արժանապէս. Ողորմած.

Թագաւոր փառաց Քրիստո՛
Որ ժամանեալ զաս 'ի յերկնից
Ի վերայ թեւոց հողմոց

Քո հայրենի կերպարանքը
Եւ առնես հրաքարձութեամբ
Զքննութիւն սրդոց մարդկան. Որոր.

Ի դնել բեմին բազմի փեռայն
Եւ առագաստն գարդարի.
Գարբիէլեան փողն գոչէ,
Սուրբք ամենայն անդ հաստատին.
Արդարոց դասքն բերկրին
Իսկ մեղաւորքն թախանձին. Որոր.

Յարժամ հընչիւն փողոյն լինի
Եւ Ղեւտական գիրքն յայտնի.
Ձառագայթ արքայ խաչին
Յարեւելից փայլեալ ծագի.
Հրեշտակաց գունդք ծաւալին
Հրեշտակապետք արարանեալին. Որոր.

Ահեղ խորհուրդ քահանային
Բազկատարած կայ 'ի բեմին.
Առաջի աստր սեղանոյն
Հաւր չիջանի, խառար մեծի.
Տրամեալ հոգիքն աւրհնեսն
Զի թագաւորեալ մեզաց լինի. Որոր.

Մոսէս Սարաւանդեան

Եւ Ահարոն Ղեւտացին.
Մարգարէքն Իսրայէլի
Եւ քահանայք հին օրինին.
Յառաջագոյն մեզ ծանուցին
Զգալուստ սուրբ Միածնիդ,
Ի փրկութիւն մեզ յայտնեցին,
Յանապատին կերակրէին. Ողորմած.

Տըրամահազարդ չարչարանօք
Ի յանձն առեր զմահ խաչին,
Եւ փայտին քարձող եղեր
Վասն Ադամայ նախաստեղծին. Ողոր.

Զարհուրեցան զօրք երկնայինք
Յորժամ տեսին զՏէրդ 'ի խաչին.
Արեգական լոյս քօղարկեալ
Եւ լոյս լուսնին նըւազեցաւ.
Յահեղ փառաց Աստուածորդւոյդ
Խաւար եղեւ ընդ տիեզերս. Ողորմած.

Ուրախացան ազգք մարդկան,
Յորժամ լըսան զքո յարութիւնդ.
Նորափեսուր զարդարեցան
Ի յարութեան սուրբ Միածնիդ. Ողոր.

Ազաչանօք սրբոյ խաչին

Եւ անբարբառ բարեխօսին.
Եւ սրբոյ աստուածածնին
Եւ Յովհաննու Կարապետին.
Եւ սրբոյն Ստեփաննոսին
Եւ առաջին մարտիրոսին.
Եւ սրբոյ Լուսաւորչին
Հայաստանեայց Հայրապետին.
Եւ սրբոց առաքելոց
Եւ համօրէն Մարտիրոսաց. Ողորմած.

ԱՐԵՆՈՆ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ

Բնեն որ ընդ Հօր յէութեան և համա-
զոյ ասէր Հոգւոյն. զպատուիրն խրատան
խառնեալ ընդ Հոգանիւթ բնութեանս
զոր զարդարեալ փառօք եղ ի դրախտին
փափկութեան։

Յարամ ցրնծայր զուարճացեալ անտրխ-
տութեան խրնդութեամբ. քանզի ի զՄատա-
ռած տեսանէր միշտ խոնարհեալ ի դր-
ախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ սրբ-
ազարդէր ի յինքեան։

Վասն որոյ ազաչեա մայր ասասածոյ
Մարիամ. զմիածին քո զորդին զի շնար-
հեցցէ, զոսա ազաչին ժառանգել զերկրա-
գին մեզ զդրախտին փայել չարութիւն։

Ամենայն յորինեալ հոգեւոր ազամ
զի ի դրախտին փափկութեան սրբարա-

հայր իսկ ընդ հրեշտակս. զնոսա ոչ ի մեզ
է յորդւոցն Քրիստոսի հաղորդս։

Այսոր է խորհուրդ սատանայական
նախանձուն, որ է արարչագործ Աստուծոյ մեր-
կեալ զատանայդ. մատնեցուք և մեք
մեր զամենայն իրաւունս սատանայի։

Փոխ ՀԷՐ Լ ԱՐՔԵՍԻ Լ։

Այսոր է տեսչ զամենայն սատանայական
տեսակ արարածք, և տարաշխարհս զոր է ընդ
երկնքամբն սատանայ վերոյ մեր. զի է
զարարածոցն վերոյ զամենայն է ի հրամանին
մատանեալ Քրիստոսի։

ԿԱՆՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ ԱԶԱՐԱՀԱՏԻՑ

Որ զօրէնքս արքութեան պատՀաց նախ-
ի դրախտին ասանդեցեր. զոր ոչ պահե-
լով նախատաւելծքդին ճաշակմամբ արդա-
ղոյն ճաշակեցին ըզդատնութիւն մեղաց
և մահու. վասն որոյ չնարհեա մեզ տէր
ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրա-
նաց :

Որ զանազան վիրաք մեղաց Հարաք յո-
գիս ի թշնամւոյն և ի բազմապատիկ Հի-
ւանդութիւնս կարօտացաք մարդասէրդ
բառնալոյ ըզցաւս մեր. վասն որոյ բա-
ժըշկեա ըզմեզ քրիստոս արդէն մարդա-
սէր :

Որ եկիր ի փրկութիւն մարդկան ծա-
նրընդեւամբ կուսին մարիամա. և կենդա-
նարար քո յարութեամբդ Հրաւիրեցեր

զմահացեալքս ի յարութիւն անմահութիւն. վասն որոյ ապաշխանօք մօր քս կենցս զմեզ փրկիչ։

Որ գերագոյն փառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ քս քրիստոս խոնարհութեան քս ճանապարհս առաջնորդելով ի յերկնային վարս հրեշտակաց. ապաշեմք առաջնորդեա մեզ ամէր ի յարքայութիւն։

Փառք Հօր և Որդւոյ և

Որ զդառնութեան պտղոյն ճաշակնս որով մեռաք արդարութեան, պահելով քս քառասնօրեայ փոխեցեր ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն. ապաշեմք արբո մեզ ամէր զուրախարար սիրոյ քս զբաժակն։

Այժմ և միշտ և յաւիտեան։

Որ անապական ծննդեամբդ քս լուծեր զերկրաւոր նախատօրն, մարիամ մայր աստուծոյ. բարեխօսեա առ միածին Որդի լուծանել զկապանս մեղաց մերոց. և ապաշեա փրկել զանձինս մեր ի տրտմութենէ։

ԿԱՆՈՆ

ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ ԱՂՕՐՀՈՒԹԻՒՆ

Օրհնեմք զքեզ անսկիզբն Հայր որդւոյդ միածնի, զոր առաքեցեր ի գարձամրն մարմնեալ ոչխարին. գարձո և զմեզ ի մեղաց որդւոյ քո չարշարանօք։

Գովեմք զքեզ բան և լոյս որ զմխիթարեան քո պատեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալս մեզ քոյին սուրբ շարչարանօք։

Բարեբանեմք զփառակիցդ հօր զՀոգիդ Հչմարիտ. որ նորոգեցեր զՀնացեալքս մեզ հնոյն Ադամայ. նորոգեա և զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո չնորհաց։

Ուրախացիր բարձրելոյն Հոգանացեալ զօրութեամբ, և բնակարան սուրբ Հոգւոյն որով ծնար զբանն աստուած. բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ

Լոյս ի լուսոյ ծնունդ և ծագումն. որ եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարի բրնութեանս, զոր ընդ խաչին բարձեր ի վերայ ուսոյդ. մաքրեա զմեզ ի մեղաց մերոց:

Սուրբդ արբոց էիր մաքրութիւն. որ ածեր ասն քո աւել ի մեղաց զաշխարհս մաքրելով. ի նմա գտեալ զպատկեր քո նորոգեցեր. նորոգեա զմեզ ի հնութենէ մեղաց:

Փառք Հօր և որդւոյ:

Ընդ անուանակին որդւոյ գոչեմք առ հայրդ զբթաած, մեղաք յերկինս և առաջի քո քաւիչ յանցանաց. ել ընդ առաջ սիրով զրկեա համբուրիւ, մաքրեա զմեզ ի:

Ամէն և հիշդ է յաւէտեան:

Աղբիւր կենաց բղխեալ յեղեմայ սուրբ Աստուածածին, որով արբեցաւ երկիր ծարաւուս հոգւոյն խմաստութիւք. տալ մեզ մարթեա աղբիւրս արտասուաց մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

ԿԱՆՈՆ

ՁՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ ԱՂՈՒՀԱՑԻՑ

Ո՛ Արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին, և ի նմա հաստատեցեր անտես զպեսս հրեղինաց. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ։

Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. և ի դրախտն որ յադենի տնաւոր եղեալ զմարդն՝ առաջին. օրհ։

Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. և ի սմա կարգեալ անտես զքարոզս բանին ճշմարտութեան. օրհ։

Անտանելոյն տաղտուար բարձող էիցս բարձողին. որ ծնար զաստուած մարմնով զանմարմնաբար ծնունդն հօր. բարեխօսեա վասն մեր աստուածածին մարիամ։

Որ տիրական առ ի քէն կարգեալ տրն

տես բնութեան մերոյ, իմաստութեամբ զպատրաստս եթող քոյոց պարտապանաց - թող և զմեր զ յանցանս ողորմութեամբդ քո Քրիստոս :

Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեց օձմամբ հոգւոյն, մերկացաք մեղօք բառ նախահօրն պատրանաց · զգեցո զնոյն մերոսին ողորմու :

Փառք հոր է — որդւոյ

Յառաջնումն կայծակունն ի սրտի - բէրցն անհպել ին, անմաքրապէս մերձեցաք զոլ պատրաստան քում խորհրդոյն · նորհեա զնոյն մաքրութեամբ ի թագաւորութիւն մեզաց մերոց :

Այժմ է — մեղք է — յաւիտեան :

Որ վառեցար ի յարիւնն և ոչ կիզար բառ մարեանոյն · այլ եռար զհոգն կենաց կերակուր բանաւորաց · բարեխօսեա առ Քրիստոս ջնջել զգիր մեղաց մերոց :

ԿԷՆՈՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ ԱՂՈՒՀԱՑԻՑ

Որ պատուիրան ճշմարտութեան ուսանիցեր եկեղեցւոյ քո քրիստոս, անսահման ժամանակաւ ազօթել միշտ առ աստուած հազւով և մտօք։

Որ զբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ. հանելով զդիշերն ի զլուխ յազօթսն աստուծոյ բնութեամբ մերով անօրինաբար, որում կրկնի ծանր ամենայն։

Վասն որոյ և մեք պարզատեսցուք առ քեզ Քրիստոս, չնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման, մաքուր ազօթիւք քոյ անմարմնոցն որ յերկինս։

Աղաչանօք աստուածածնին անապական բաժ ծնողին, զիմանալի աչս սրտից մե-

ոց բացցէս ազատութեամբ հայել ի լոյս քո Քրիստոս։

Դատաւոր արդարութեան հատատեցեր ի մեզ զմիտս մեր, զատել զհոգի և զմարմին, արդարացէս զատամբ քոս օրինաց քոց Քրիստոս։

Իսկ անիրաւ դատաւորին որ ի քաղաք բնութեան մերոյ, ոչ ունելով զերկիւղ քո տուրբ, և անպատկառ ի մարդկանէ ոչ առնելով զատ զրկելոյն։

Փառք հոգ է— ոչիչ։

Այլ անմահ տուրբ միաստիւ այրի հոգի իմ ազաղատի, ուստ զիրաւունս քո իմում դատաւորիս, առնել ինձ դատաստան արդար ընդ ատտի մարմնոց իմոց

Աւժմ է— մէջտ է— յաւիտեան։

Մարիամ կոյս անարատ զանապական միաստիւ աղաչեա զի հաշտեացի ընդ այրի ելեալ հոգիս, և միաւորեացի զարձեալ միով ընդ հեռացեալս ի նմանէ։

ԱՌԵՆՈՒ

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ ԱՂՈՒՀԱՑԻՑ

Որ զխորհուրդս քո գաղտնեան յառաջագոյն գուշակեցեր. մարգարէիքն խորհրդէլի զոր ընտրեցեր յետ Մովսէսի. որք խառնեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք. տաւր մեզ փրկիչ ողորմութիւն և զմեղացս զթողութիւն:

Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքդ ծանուցին. զհասանիլ մեր փրկագործ առ ի վախճան ժամանակին. երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ զկերպ ծառայութեան. տաւր:

Ի վերջերորդ աւուր զՄեղտոմ ատեղծեր ի տիպ քո տիրական. որ ոչ պատեալ զգաստութիւնն մերկացար զգաստմտանեն. խոկ տար Կարապետի ի վերջ դարուն այդ արարեր իրաւունքդ. տաւր:

Տամար բաց ոչ անուանելին և ասացուս անձառ բանին. որ գնացեալ մարն Եւ այլ բարձեր զանձն արամարդ. Հայցեաս յորդւոյ զի միածնի Հոր Հաղցուս թիւանն միջնորդի, բանով և մեզ գլուխս թիւն և ասայ զարդ խոստացուցիչն։

Բաս ասելոց մարդարէին որ ասս զրեկաց զի ասեսցի զանձն, ցնծասցի և մեր ձայն ասուսցի բեր զարդս ասելոց։ Հանդերձ մեր ասի բեր զարդասցուս ասելոց կրկնակի։ Հանդերձ մեր ասի բեր զարդասցուս ասելոց և բերկրութիւն բեր զի ցնծաս։

Մարն նման ասոց ասելոց Զարդարեան Հոր սրանքն, եթէ ասուցեալ բեր ասցս զի ասս զարդ և զեղ զարդասցուս։ Հանդերձ և յեղ և զուսանելի կրկին ասցուցեալ զարդ Հոգոյ։ Հանդերձ զանձ ասելոց զարդասցուս զի մարդ Հոգոյ։

Զարդ Հոգ եւ սրտոյ։

Զանձեր մարդոյ զարդ կրկնակի ասի զրեալ, զարդասցուցեալ, Հանդերձ Հոգոյ զարդասցուցեալ ասցի մարդ Հոգոյ։ Հանդերձ զանձ ասելոց զարդասցուցեալ։ Եթէ զարդասցուցեալ ասցի զարդ։

հաւ առաջի իւր բարբառէ. յայնժամ Յիսուս մեզ խնայեսցէ՝ զթա Քրիստոս և ողորմեսցէ։

Եւ ամէն։ Ամէն։ Ամէն։

Աստուածածին անհարսնացեալ յերկրէ յերկինս հարսն ընծայեալ. յորժամ բարձմամբ լուսոյ նման քո միածնիդ յաջակողմեան. յայնժամ մարդթեւս ընդ մեր գնայն փրկել զմեզ յահեղ բոցոյն. համարձակեսցիս սիրոյ սպասաւորդ երդել զերգս գովեստս սիրոյ երգիցուս։

ԿԸՆՈՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԷՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Որ վերօրդնիս յաթոռս քերովբէից, ի վերայ նստիլ յաւանակի հանձեցար. բարեբանեալ որ եկիրդ ի կեցուցանել:

Ասատի և մեք զյապթական օրհնութեանցն զձայն մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ ոգւոյն օրհնութեամբ. բարե:

Ամենեքեան ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ տեառն ալէլուիա. և օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ տեառն ալէլուիա:

Ելոյր յաւանակ քերովբէ, և ոգւոյքն երրայեցւոց բարեբանեն, օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ եկեալ անուամբ տեառն:

Այսօր գոլով ի Բեթանիա՝ քս ամենա-
զօր հրամանաւդ ձայնեցեր Ղազարու, և
զողացաւ մահ. դժոխք պարտեցաւ, ա-
պականութիւն լուծաւ. կենդանարար Քրիս-
տոս կեցո զմեզ:

Այսօր գոլով ի Բեթանիա զքո զաշխարհ-
տակեցոյց ձաւրբ զյարութիւնդ յառաջա-
գոյն ծանուցեր անապականաբար կոչ-
մամբ զչորեքօրեայն ի թաղմանէ. կեն:

Այսօր գոլով ի Բեթանիա երրայեցւոց
մանկունքն աքանչացեալ ասէին. զմարիա-
մու զեղբայրն ի թաղմանէ յարուցեալ
որդւոյն Մարիամու. կեն:

Կենդանութեանց բաշխող Քրիստոս ի
Բեթանիա եկաւրեալ այսօր, բարեկամին
Ղազարու պարգեւէ զկենդանութիւն:
Տնօրինաբար արտասուելով ընդ Մար-
թայի և ընդ Մարիամու ողբակցէր. և
որպէս մարդ հարցանէր ուր եդիք զՂա-
զարոս:

Եւ որպէս զասուած բարբառով յարու-
ցանէ ի մեռելոց զչորեքօրեայն. եւ զու-
զընթաց ձայնին մեռեալն ելն արտաքս
անապական:

Փառք հոգի և սրտի։

Ով յաւար զանազանիկ բն բանն որ յաւիտեան փառաց ընդ հօր յերկրի երեւեալ տեառք քրիստոսեան ձայնիւն օրհնեացուք։ օրհնեալ եկեալ անուամբ տեառն։

Ամէն և միշտ և յաւիտեան։

Ով յաւար զուարճացան սիրեցերք զալբատեամբ աստուածորդւոյն յիրուսաղէմ, եւ զոչէին հնչմամբ երգով, օրհնեալ եկ։

ԾԱՂԱՎՈՐ ԳՈԼՈՎ ՔՈ ՅԱՇԽԱՐՀ ՄԸՆԵՐ Ի ՔԱՂԱՔՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

(ԲՀ.)

Ծաղաւոր գոլով քո յաշխարհ մըներ ի քաղաքն Երուսաղէմ. նըստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի. կոչել զհեթանոս յերկրպագութիւն։

Մերքն ոտովք ձիթենեօք և տղայքն ոտովք արմաւենեօք. և երամ երամ դառուքն աղաղակէին. ովսաննա օրհնեալ եկեալ ի յանունն տեառն։

Ցընծացաւ սուրբ սիօն. բերկրեցան ասորք զեկեղեցիք. և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ. օրհնէին զդալուստ ոք փրկիչ յաշխարհ։

Յորժամ եկին Յիսուս յԵրուսաղէմ ի քաղաքն. ընդ առաջ եին ծերքն ասասք ձիթենեաց. և գասասուածորդին տրատարէին:

Ի լեռնէ ձիթենեաց սարածանէին մանիկունքն զհանդերձս իւրեանց. և ասաս ի ծառոց բերեալ մատուցանէին ասասուածորդւոյն սուրբ թագաւորին:

Ասասվ և սերեւեալ ձիթենեաց երայեցւոց մանկունքն օրհնէին սրախքեր երուսաղէմ քաղաք. և ցրնծա սիօն մայր եկեղեցի:

Զգալուսա քս Քրիսասոս այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի սուրբ. յաղթական երգով բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ սեառն:

Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նասել յանձն առեր. ընդ մանկունսն բարեբանեմք. օրհնեալ եկեալ ան:

Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա. և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Ի յարութեան յաւուր դատաստանն հրաշակչին տարածանէին մանկունքն ըստանդերձս. և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ տիրոջն:

Ասասա ի ծառոց բերեալ մատուցանէին աւտուածորդւոյն առ Հանապարհն. և անդադար:

Ի ծերոց բղխեալ օրհնութիւն և ի տղայոց փառաբանութիւն. և անդադար ձայնիւ օրհնէին օրհնեալ եկեալ անուամբ տեառն:

ԳԱՆՈՆ ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒՆ ԹԱՂՄԱՆ

ՏԻԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՌՀԶ.

Պարզեւատուն ամենեցուն, այսօր խընդրի պարգեւս ի Պիղատոսէ. և արկոցն ոգլոյս որպէս զօթոց Հաւանի պատիլ ի Յովսեփայ:

Կենդանատուն ամենեցուն, այսօր դրնի ի նոր գերեզմանի. և զանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:

Աւրարածոց փրկութիւն Քրիստոս, այսօր եդաւ ի նորափոր վիմի. զոր օրհնեն զքրք երկնից երգով պահպանի ի զինուորացն:

Կենդանին յաւիտենից Քրիստոս, այսօր խընդրի որպէս մեռեալ ի Պիղատոսէ. և մերկութեան ծածկոյթն ադամայ յանձն

առնու պատիւ ի Յովսեփայ։

Անմահու թեանց տուող Քրիստոս, այսօր ի հոգ մահու խոնարհեցաւ. և բնակեալն ի լոյս անմատոյց՝ թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի։

Արեգակն արդարութեան Քրիստոս, այսօր եղաւ ի գբի աստուերականի. և փառացքն՝ օր ճառագայթ ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի։

Գլուխ տուեալ հաւատոյ և փայլ կենաց մարդկան յայտնեալ. զոր տեսեալ այսոյն պրպտոյ կործանեցաւ անկանդնելի ապաշ։

Դորայսաւ թշնամին ընդ յայտնիլ արքայ խաչին. և ի յահէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի. ապաշնեմք սա։

Երկինքք ցընծային և երկիրս ուրախանայր. քանզի փրկիչ ցուցաւ աստուր խաչն և լուսաւոր տիեզերաց. ապաշ։

Փառք հօր է՝ որդւոյ։

Ցընծութիւն արարածոց Քրիստոս. այսօր արտասուի որդէն մեռեալ արքամատչեցիցն. և բուրուն անմահութեան խրնգի ի գգաստիցն իւրարերիցս։

ԿԱՆՈՆ

ՊԵՏԵՐԱՍՏԷԻՆ. ԱՌԱՔԻ ԱՒՈՒՐՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(Գ.Հ.)

Առաքելոյ ազաւնւոյ. իջանելով մեծաձայն հընչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրագինեաց անկիպելի զաշակերտան. մինչդեռ նրատէին ի սուրբ վերնատանն:

Անանիաթական ազաւնի. անքննելի որքանէ ըզխորս աստուծոյ. զոր առեալ ի հօրէ ազատէ զահաւոր և ըզմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս ելոցն ի հօրէ հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն. և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Կենդանարար սասրեաց մարդասէր հոգի. ըզժողովեալսըն միարանական սիրով լուսաւորեցեր. հրեղինաք լեզուաք վանորոյ և մեք այսօր ասենք զգալուստս քո սուրբ։

Զուարճացան քո գալըստեամբըն սուրբ առաքեալքըն. կոչելով ի միասին ըզցըրուեալսն ի միմեանց բազմաձայն լեզուաք վասըն որոյ։

Փառք հօր և որդւոյ և։

Հոգեւորական սուրբ մըկըրտութեամբ զարդարեցեր նոքաք ըզտիեզերս. ի զգեստս լուսափայլս և նորափեսուրս. վասն որոյ և մեք այսօր ասենք ըզգալուստս քո սուրբ։

ԿԱՆՈՆ ԾՈՂԱԿԱԹԻՆ

ՕՐ Ի ՆՈՒԹՈՒՆ

(ԳԼ. Զ.)

Ուրախալեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պրակեաց ըզքեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրսն քո սքանչելի փառօքն իւրովք։

Եկեղա յոյժ դուստրըր սիրելի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերատին քո նորոգմամբ. և թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ։

Ընդ դաս երկնաւոր զօրացըն վերառեալ ոնեմբք քեզ այսօր զանգադար փառատրութիւնս. ուրախ լեր Հարսն անարատ անքննին քո խորհրդով։

Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ

եկեղեցի. և Քրիստոս թագաւորն ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երդեցարք Քրիստոսի երգ նոր:

Դաւք հրեշտակացքն վայր իջեալ յերկնից երգեն ասելով. հրաշալի ձայնիւն եղանակելով. երգեն զերգս օրհնութեան երբեակ սրբոյ ձայնիւ:

Ուրախալեր բերկեալ հարանացեալ սուրբ եկեղեցի. պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն. ծագողին ըզչող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի:

Սուրբ զաւուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք:

Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ փրկիչն ի սրբոյ կուսէն:

Ասէ ուրախալեր բերկրեալդ. քանզի ահա տերանց է ընդ քեզ:

ԳԱՆԱՆ ԵՐԻՍԱՐԴ ԱՌՈՒՆՆ,

ՕՐԻՆԱՆՈՒԹԻՒՆ

(ԳԼ.)

Զօրութիւն սուրբ խաչի զոր գրեսցես ի գրեսցես որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ զքեզ յամենայն փորձութիւնէ :

Բանդի ի սմա բարձրացաւ սատանայ. և ի սմա հեղեր զարեանդ սուրբ պարծանաց. սա պահեսցէ :

Եւ զարբ մի ասեցուք զարբաւորաց նշանս խաչի զոր ցուցեր աշխարհի. սա պահեսցէ զքեզ :

Յս սատանայանեն Աստուծոյ ի կենդանարար ի գրեսցեն. խաչիս սրբոյ պատուական փայ-

ին ծառայն գիտութեան. օձաձայնեմբ պատ-
ուանօքն ճաշակեալ ի պտղոյն. և եղեւ
վայրաբնակիկ մայրաքաղաքն Երուսաղէմ:

Արեւելք ի դրախտին ընծայեցին ըստ-
ուգոյ խաչին. և եկեալ կատարիւր ի
ուեղջոջ կառափման. բարձրանայր ի դի-
տին տարբեղէն փայտակերան, տուրբ քա-
ռաթեւքն պահապան անձանց մերոց:

Փառք հօր և որդւոյ:

Բանն անեղ համագոյ որ ընդ հօր
և տուրբ հոգւոյն. երեւեալ ի յերկրի պայ-
ծառացան արարածք հրզօրին կարողու-
թեամբ և ըզմեզ վերագրեաց յորդէդր-
ութեան շընորհս:

ԿԱՆՈՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՌՈՒՐՆ

ՕՐԵՆՈՒԹԻՒՆ

(ԲԿ.)

Խաչն կենարար որ եղեւ ըզմեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Որ ի հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. և գաւազան զօրութեան հաստատացելոց. սովաւ:

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըզմեզ ցուցաւ. ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ ամե:

Որ յախտս փառաց նրատիս բանք ապրեաց. խոնարհեցար ի հայրական ծոցոյ առեր մարմին ի կուսէն. վերականգնելով

ի տեղի բաստարանկեալ լուսոյն զԴոպացեալ բնութիւն։

Որ կանգնեցեր զգիտաչ քո ի մէջ երկրի. և սոփաւ զգարմանափառակ դուռն դրախտին բացեր նախատեղծին. կենդանարծեալով ի ճաշակմանէ մահարեր սրատպոյն։

Եւ զօրութեամբ խաչի քո քրիստոս հիմնեցուցեր զկիաթուղիկէ եկեղեցի բնակարան սուրբ երրորդութեան։ լուսաւորեալով զհեթանոս ի սոյն կրթկնակի ծնընդեամբ։

փառք Հոգւոյ Հ

Արբուհւոյ սատուածածնին բարեխաւսութեամբ բնկալ տէր զգմաղթանս մեր. յորժամ յարևելից լուսածագիս անճառ հրաշիւք. կարապետս առնելով զոյսպիթանակ սուրբ նշանն. ապաշեմք զգքեզ տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։

ԳԼՈՒԽ

ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՆ ՄՐԾԲՆԱՆԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

(ԳԿ.)

Յաղթող և տուր հայրապետս նրման մեծին մեկնչէր. բարձող խաչին պարծանաց. զոր զիմամարտս հանդիսաւ. զգէզ ունիմք բարեխօս առ հայր յերկինս վասն մեր:

Առաքեսամք տուր. հոգւոյն յանապատէ կոչեցար. ասեր պատիւ մեծութեան նրման մեծին յամՀանուս. երգակցելով զոր վերնոցն. զգէզ ունիմք:

Կարող եղեր զօրութեամբ զամբարան-

զարծ նրշանիւք. նրմանն մեծին Պետրոսի. հովիւ շնորհեալ յաստուծոյ բնտրեալ հօտին քրիստոսի. ըզքեզ ասեմ:

Ուրախացուսն զօրք երկնից ընդ քո մեծի հրդեհելոն. որ ի մարմնի կուսացար նրմանն վերին զրաւորելոցն. ըզքեզ ասեմք բարեխօս առ Տայր յերկին:

Բրգիամամբ քո սուրբ տրաւասաց կենդանարարն էր բրմեռեալս. նրմանն փրկչին Յիսուսի կենդանարարացին զարարս. ըզքեզ ասեմք բարեխօս առ Տայր:

Այլ մեք ձայնիս ցրնծութեամբ ասեմք զքո սուրբ զյիշատակս. պատուեալ վերայ Քրիստոսի սուրբ Տայրապետքդ Յակոբ. ըզքեզ ասեմք բարեխօս:

Յարքեալ և զնոր օրհնութիւն վիշտ ի բարձունս երկնացուք. թագաւորին Քրիստոսի Տաճատացեալ ժողովուրդք:

Որ եկն ի լուսաւորել զրնտրեալսն սուրբ զեկեղեցի. և զրատեալս սուրբ Խաչին. երամս ըզխաչս երկնացուք:

Այսօր և մեք ասեցուք զնատակատարս սուրբ Խաչին. և փրկիչին մատուցուք խունկ և պատարագ յաստուծոյ:

Յանձն առեր գչարչարանս վասն նոյեան տապանին. ի հրեշտակէն ընկալար գիտայս խրիկութեան աշխարհի. ըզքեզ ունիմք պարեհաս առ Հայր յերկինս վասն մեր։

ՀԱՐՑԱԿԱՆ

ԱՐԲՈՍ ԿԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐՈՒԿԱՐՈՒՆ

Արքայութիւն մեր հանդերձեալ. բանաստեղծութիւն ամենայն բերելիք խորհուրդ ամենայն գաղտնութիւն հանգամանք և հաստատութիւն ամենայն գաղտնարարութիւն որպարարաս հանգիստ. զորանիք յաղթող. արարակիք և քրիստոսք։

Փոխանակեալք զանոնցմէ թանձր. ձրշմարիտ վրկայք արդոյ երդարարութեան. նեղիցուս յանօրինաց բռնութենէ. զի ցնծացուք յաղթանակս մարտի ձերոյ. նահատակք յաղթողք արարակիք։

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՅ

Նորահրաշ պրակաւոր. և զօրաղլուխ առաքինեաց. վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու. վարդան քաջ նահատակ որ վանեցեր ըզթշնամին. վարդապետն արեւամբրդ քո պրակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին. խոհական խմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս. Որոյ ն խորհրդական և ծանուցեալ անուն բարի. խաչելոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան պրակեցաւ.

Բենեվան բաւում ըցեալ արիացեալն քաջն Արտակ. թափառեալ ի կարմրաթիթեան բաւարային ըդխեալ ազգեն. գիրքերն գտանեն բնակեալ գրուածակ և մրկրուեալ սրեամբն իւրով. գաղտակցեալ ընդ անմարմնացն երրորդութեան երգել՝ գրիգորեան։

Երրորդութիւն գլեսուս արձեալք ի յերկնաւոր Հանդիսարանէն. երրորդութեամբն զօրացեալ՝ վանեալ զամբարս բանտարկութեան. Հմայեալ հոր ընծայեալ՝ որդւոյ զոլով շարշարակից. Հոգւոյնն յայտեալ զատերազմին և շարաւէր թագաւորին։

Խաչան բարեայն գխոսմամբ ընդդէմ մեզաւոր զայրն վառեցաւ. տարագեաց երբք յերկրին՝ զարակցեալ ընդ անմարմնացն. Տանան գարմանալի առաջոր եղեալ երրորդութեանն. տէրունեան սուրբ խորհրդոյն առն և տեղի արժանացեալ։

Ստացեալ ըզհաւատոյ վահան յուսոյն զրահիւք ծածկեալ. զիրիկատերն առ-

գրատարան իւր գրեալ եղեալ գնալոյ խուզին. վասնզի մեզ երեւեցան որ մանկան թեամբ-նոհատակեալ. խուզելոյն վրայոյ եղեալ արատակեցաւ արեամբն իւրով։

Ի հոս անուշ ոգեմտիթեալ մատուցանէր գինքն նրա էր. բանաւոր արատարարաց բնա-ծայելով հար ի յերկին. Արարչեան գանկա-լի արիարատ թեամբն հոգեալոյ. խմա-ատ թեամբ արդանալոյ՝ լեսթնարար-ման չնորհաց հարցն։

Երկրորդաբար հարազատալք բնարերարոյն նոհատակեալ. յատալեալ յաստեղեաց՝ գրեալ ի ատատր մարդարեաց. նոխուչատ-իւ զոլով բարեաց յեռաչյարելոյն Գաբրի-էլին. ընկալեալ զգրարարքսն յարքեանակ նոհատակելոյն։

Բաւական խառն մր հարարոյց և երեանից թեամբ ընդ վեցից. որք ընդ նոսին նոհա-ատակեալ. արքարարար արատերարարքեան և հերին արարքեան իւրեանց ի նորոգութեան եկեղեցւոյ ընդ նոսին արատակելով՝ ի յերկնատար հան-

գիտություն։

Գանձուն թե նաև ոչ սիրաշահություն թե խուն։ Եղբարք-
ություն թե անարք Երաշտեմք։ բարձուն թե նամ
արքայական՝ բազմեցաք մոռնալ առաքին-
եացս ելեկեցիք Հայաստանեայց արդան-
ուանէն զարարարեցան։ ուներով միշտ բա-
բեխաս բազմեցուն թե ի մարմին ացա։

ԵՐԳ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՐՈՒ ԽՍՐԱՄԱՆԸ

(ԲՀ.)

Ասյեաց սիրով հայրդ գրեմ ի քո ստեղծեալ գործս ձեռաց. և ըստ-նակրս հրեշտակաց տուր պահապան մեզ սրբությունս. փրկիցես զանձինս ի փորձանաց ի խառարի շրջօղ գիւաց գի ի ստրնջեան և գիշերի ասացուք քեզ փառս անդրանել։

Լին անեղ անբակրգրան ծրնունդ ասա-ծաս սրդի և բան. որ սրտարեր ըզտիս զարծաց և ըզդիշեր ի հանգիստ քնոյ. տուր ի նրանջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ստա հոգւոյ. գի ի։

Բարուն հոգւոց բանաւորաց՝ ազիւր լուսոյ բաշխող շնորհաց. ի փակել դրանց բնութեանց մարմնոց՝ լոյս տուր աշխարհս. ի գիշերաց առ քեզ կանխել՝ ընդ հրեշտակսն օրհնաբանել. զի ։

Սուրբդ սրբոց երրորդութիւն. ըստ մեզ մաքրեա քեզ բնակութիւն. շնորհեա ընդ մանկանցն առաքաւոր հոնգշիլ ընդ քեզ ի յանկողնի. տուր ըստ հայցուածդ բարեկամին ըստ խնդրոյ երից նրկանակին զի ։

Երեքի լոյս ըստեղծեր զտիր և ըստ-ջեր բաժանեցեր. ծագեա մեզ տէր ի գիշերի ըստ ճառագայթս իմանալի. տուր յաւելեալն ժամանակի՝ զպահպանող աջ քո հովանի. զի ի ։

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝ բորբոքեցի ի հոգիս մեր. գիտարհուրդ սրբոյ ոգոյ մեր մաքրեացէ զլոյս գիտութեան քո փայլեացէ. ի քնոյ մահու զմեզ զարթուցէ զմիտս բացով քո վառեցէ. զի ի ։

Ի քեզ նայիմք լոյսդ անմահոյց ի ըստ-զայական ծածկեալ լուսոյ. որ վասն մեր եդար ի գրի և նընջեցեր ի տապանի առ

մեզ նընջեա արթուն բնութիւն. հերքեա զշարին ներգործութիւն- զի ի:

Էիզ լուսոյ անբաւութիւն պարտանօք կամ թ առաջի. որ փակեալ դրամբք յերեկոյին երեւեցար մեռաւանին. ընդ թոմմայի առ քեզ գոչեմք, Տէր և Աստուած զքեզ դաւանիմք. էջ և առ մեզ յերեկոյիս և առաւ զողջոյն քո ի հոգիս:

Թամեալքս ըզքեզ տէր աղաչեմք, մեզ յօգնութիւն նայեա հայցեմք. պահապանդ իսրայէլի անձանց մերոց լեր հովանի. օթեա առ մեզ խաղաղարար զի նընջեացուք անխռովարար. և ընդ առաւօտս կանխեացուք օրհնել ըզքեզ ընդ հօր հոգւոյ:

Գոչման փողոյն գաբրիէլի որ ի վերջնումն դիշերի. լսել արա զմեզ արժանի և աջակողմն օդեաց դասի. անշէջ վառեալ լոյս լապտերաց ըստ իմաստուն հինգ կուսանանց. զի ընդ փեսայդ ի յառագաստ հարսանիք հոգւով մրցուք ի փառս:

Հոլածեա ի մէնջ տէր նըշանաւ խա-

չի քո գլուղ դիմամարտ և զանելոյթ գա-
գանն. և մի տար յապականութիւն գքո
ժառանգութիւնս։

Բարեխօսեա վասն մեր աստուածա-
ծին մարիամ. որ ծընաւ զաւէր աստուած
որ հովուէրն գիսրայէլ. ամենազօր և
սքանչելի փառօքն իւրովք։

ԵՐԳ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՈՒ ԽԱՂԱՂԱԿԱՆԻՆ

(ԳՁ.)

Իքէն հայցեմք հայր գըթութեանց աստուած մըխիթարութեանց. ի տըխրական գիշերային մերձեալ ժամուս. մըխիթարեա ըզմեզ ի տըրտմութեանց մեզաց. և շնորհեա զուրախութիւն դործովք արդարութեան. աղաչանօք սուրբ աստուածածնին և ամենայն արդարոց:

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման որդի աստուծոյ. եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո ի ծանրութեանց մեղաց զանձինս. և զօրացո բառնալ կամաւ ըզքաղցըր լուծ քոց պատուիրանաց. աղաչանօք սուրբ:

Պարարեմք առ քեզ հոգւով ի հանգստեան հատեալ ժամուս մարդասէր հոգի աստուծոյ. յարժամ նորոգես զերեսս երկրի և վերբատին ստանաս զոգիս մարդկան նորոգեսուր զարդարես ընդունչեցեալսին մեր ըզծընեալսն ի քէն սուրբ աստուածնան. ապաչանօք սուրբ:

Զկենդանագիր անարատ ծընողի քո արկանեմք առաջի անոխակալ տերութեանդ քո. յարժամ դաս փառաւք հօր դասել ըզթշնամին խաչի քո. ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի. ապաչեմք ըզքեզ տէր պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ:

Հաղորդս արա և ըզմեզ տէր ընդ արբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել ըզքեզ ի յարութեան քո. արժանաւորեա տէր տեսանել ըզքեզ ի միւսանգամ քո գալստեան. օրհնութիւն աստուածոյին ի բարձունս:

Ի նախ քո յաւելի դատաւոր ահեղ. ապաչանօք սուրբ աստուածածնին յիշեա ընդունչեցեալսին մեր. յարժամ դայցես անճառ փառաւք. քանզի քո են փառք յաւիտեան ամէն:

9.. 0 F C 0

ԵՐԵՍԱՏԱԿԱՐԱՆ

Ընթերցումն յԵլից

(Գէր։ Եղ։ Գլ։ ԺԲ։)

Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացւոց և ասէ։ Ամիս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց։ առաջին եղիցի յամիս տարւոյ։

Խօսեա՛ց ընդ ամենայն ժողովրդեան որդւոցն Իսրայէլի՝ և ասասցես։ Ի սահմանի ամսեանս այսորիկ տացեն իւրեանց իւրաքանչիւր ոչխար ըստ տանն հարց, ոչխար ըստ երդ։

Եւ եթէ սակաւ իցէ՝ ի տանն, որպէս թէ չիցէ բաւական լինել ոչխարին, առցէ ընդ իւր զդրացի իւր՝ և զընկեր իւր ըստ մարդաթուի։ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում՝ համարեսցի յոչխարն։

Ոչխար կատարեալ՝ արու՝ տարեւոր՝ առնուսցուք։ Եւ եղիցի ձեզ պահեալ մինչեւ ՝ի չորս

և 'ի տուն աւուր ամսոյս այսորիկ. և զեն-
ցեն զնա ամենայն բազմութիւն ժողովրդ-
եան արդացն Իսրայէլի ընդ երեկս :

Եւ ասցեն յարենէանսի. և զիցեն 'ի վե-
րոյ երկուց սեմոցեն բարաւորի ասեցն,
յորս ուտիցեն զնա 'ի նոսա :

Եւ կերիցեն զմիսն 'ի գիշերս այսմիկ
խորովեալ հրով. բաղարջ ընդ եղէգս կե-
րիցեն :

Եւ ոչ ուտիցէք 'ի նոցանէ հում. և ոչ
պոխ եփեալ ջրով՝ այլ խորովեալ հրով,
զգլուխն ոտիքն հանդերձ և զիրուսին
նորա :

Եւ ո՛չ թողուցուք 'ի նմանէ այր. և
ոսկր մի՛ բեկանիցէք 'ի նմանէ. և որ ինչ
մնայցէ 'ի նմանէ այր, հրով այրեսջիք :

Եւ այսպէս ուտիցէք. գօտիք ձեր ընդ
մէջ, և կօշիկք ձեր յոտս, և ցուպք ձեր 'ի
ձեռին. փութանակի ուտիցէք. զի Զատիկ
Տեառն է :

Եւ անցից ընդ ամենայն երկիրդ Եգիպ-
տացւոց 'ի գիշերի այսմիկ. և հարից զա-
մենայն անդրանիկ յերկրիդ Եգիպտացւոց
'ի մարդոյ մինչև յանասուն. և յամենայն

դիտն Եզիպտացւոց արարից զվրէժխնդրութիւնս. զի ես եմ Տէր։

Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ 'ի վերայ տանցն, յորս իցէք դուք անդ. և տեսից զարիւնդ. և ապրեցուցից զձեզ. և ո՛չ լինիցին 'ի ձեզ հարուածք 'ի տամակել յորժամ հարկանիցեմ յերկիրդ Եգիպտացւոց։

Եւ եղիցի ձեզ արիւնդ այդ 'ի յիշատակ, և տօնիցէք զդա տօն Տեառն յազգս ձեր օրէն յաւիտեանս տօնիցէք զդա։

Զեօթն օր բաղարջ ուտիցէք. յառաջնումէ խակ օրէ տնոյն անհետ առնիջիք զխմոր 'ի տանց ձերոց. ամենայն որ ուտիցէ խմոր-եալ՝ տամակեսցի անձն 'այն յիսրայէլէ։

Յառաջնումէ օրէ տնոյն մինչեւ ցօրն եօթ-ներորդ նուիրեալ եղիցի ձեզ սուրբ. զամենայն գործ ոպատու մի՛ գործիցէք 'ի նոսա, բայց միայն որ գործիցի ամենայն անձին, այն միայն գործեսցի ձեզ։

Եւ պահեսջիք զպատուիրանս զայս, զի յաւուրս յայսմիկ հանից զզօրութիւն ձեր յերկրէս Եգիպտացւոց. և առնիցէք զօրզայս յազգս ձեր օրէն յաւիտեանս։

Ի սկզբանէ շրջեքտասանորդի աւուր ամսոյն առաջնոյ՝ յերեկոյեան բաղարջ ուտիցէք, մինչեւ ցքսան և մի օր ամսոյն

ցերեկոյ։

Զեօթն օր մի՛ դացի խոսք 'ի տունդ ձեր. ամենայն որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն 'ի ժողովրդենէ Իսրայէլի, յեկաց և բնակաց երկրին։

Խմորեալ մի՛ ուտիցէք. յամենայն բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ։

Եւ կոչեաց Մովսէս զամենայն ծերակոյտ յորդւոցն Իսրայէլի, և ասէ նոսա. երթա՛ք, առէ՛ք ձեզ ոչխար ըստ ազգաց ձերոց, և զենջի՛ք 'ի զատիկ։

Եւ առնուցուք մշտիկ զոսպայի թմթմեալ յարեան, որ առ դրօքն է. և արկանիջի՛ք զբարաւորսն և զերկուքսմբք սեմօքն յարենէ անտի, որ առ դրօքն. բայց դուք մի՛ ելանիցէք իւրաքանչիւր ըստ դրան տանն իւրոյ մինչեւ ցառաւօտ։

Եւ անցցէ տէր հարկանել զԵգիպտացիսդ. և տեսանիցէ զարիւնն որ 'ի վերայ բարաւորին և 'ի վերայ երկուց սեմոց՝ և զանց առնիցէ տէր զդրօքն, և ոչ տայցէ թողել սատակչին մտանել 'ի տունս ձեր և հարկանել։

Եւ պահեսջի՛ք զբանս զայս՝ օրէն քեզ և որդւոց քոց մինչեւ ցյաւիտեան։

Պրոբ հանեցեր ծերաստրութեանէ զՏեր պարգեւագրեալ։ (երիցս կրկնեաց։)

Ընթերցումն յԵռամեայ մարգարէէ։

(Գիրք Եռայ. Գլ. Դ. 1։)

Լուսաւորեայ լուսաւորեայ, Երուսաղէ՛մ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցին։

Զի ահա խաւար ծածկեաց զերկիր, և մառախուղ զհեթանոսս, բայց՝ ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երևեսցին և գնասցեն թագաւորք՝ ի լոյս քո՝ և հեթանոսք՝ ի ծագել լուսոյ քո։

Համբարձ շուրջ զքեզ դաշտս քո, և տես ժողովեալ առ քեզ զամենայն մանկունս քո. զի եկին հասին՝ ի հեռաստանէ որդիք քո. և զասեալք քո՝ ի վերայ ուսոց նոցա բարձեալ բերիցին։

Յայնժամ տեսցես և խնդասցես, երկիցես և զարհուրեսցիս՝ ի սրտի քում. զի փոխեսցի՝ ի քեզ մեծութիւն ծովու և ազգաց և ժողովրդոց։

Եկեցեն 'ի քեզ երամակք ուղղուց, և ծածկեցեն զքեզ ուղղութեամբ Մարդիամա և Գեփայ. ամենեքեան 'ի Սարայէ եկեցեն բերել ոսկի և կնդրուկ, և ակոնս պատուական, և փրկութեան Տեառն ազգեն զաւետս:

Եւ ամենայն խաչինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ, և խոյք Նաբայեթայ ծառայեսցին, և մատուցին ընդունելի պատարագք 'ի վերայ սեղանոյ իմոյ և տուն աղօթից իմոց փառաւորեցի:

Ո՞վ են սոքա որք իբրեւ զամպս թռչուցեալ են, և իբրեւ զաղաւնիս ձագուխսն երամովքն զան առ իս:

Ինձ ակն ունին կղզիք և նաւք թարշիշի, յառաջագոյն ածել զորդիս քո 'ի Հեռաստանէ, զարծաթ և զոսկի ընդ իւրեանս վասն անուան Տեառն որդւոյն, և վասն սրբոյն Իսրայելի փառաւորեաց:

Եւ շինեսցեն որդիք այլազգեաց զպարիսպս քո, և թագաւորք նոցա ընծայեսցին քեզ. զի վասն բարկութեան իմոց հարի զքեզ, և վասն ողորմութեան իմոց սիրեցի զքեզ:

Եւ բացցին դրուանք քո հանապազորդ 'ի տաւէ և 'ի գիշերի, և մի՛ փակեսցին կրկի՛ ի քեզ զգօրութիւն ազգաց, և զթագաւորս իւրեանց ածցեն առ քեզ։

Զի ազգք և թագաւորք որք քեզ ոչ ծառայեսցեն՝ կորիցեն, և ազգքն աւերեալ աւերեսցին։

Եւ փառքն Լիբանանու առ քեզ եկեսցեն սարդիւն և սօսիւն, նոճիւն և մայրիւ՝ առ հաստակ փառաւոր առնել զտեղի սրբութեան իմոյ, և զտեղի ոտից իմոց փառաւորեցից։

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ
զտէր ողաշեսցուք

(Երից) կրկնեա։

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ 'Ի ՅՈՎԲԱՅ։

ԼԸ. Լ։

Ո՞վ է դա՝ որ թաղուցուն, յինէն բղխարհուրդս, ժողովեալ գրուն 'ի սրտի. և համարի յինէն թաղուցուն։

Պնդեա իբրեւ զայր զմէջ քո. Տարցից զքեզ և ասա՛ ինձ զասածսն։

Ո՞ւր էիր՝ մինչ ես հիմունս արկանէի երկրի. ասա՛ ինձ. եթէ խելամտու՛ն ես հանճարոյ։

Ո՞վ եդ զչափս զոսա. թէ գիտցես. կամ ո՞վ արկ 'ի վերայ զոսա զլար։

Յո՞ր վերայ հաստատեցան ոտքք զոսա. ո՞վ է՝ որ արկ զվէմն անկեան 'ի զմա։

Յորժամ եղեն ասեալք ծերք՝ ամենայն հրեշտակք ասեալսց օրհնեցին զքս մեծաձայն. և ամենայն հրեշտա՛ք իսմ զոսվեցին։

փակեցի զծով դրամբք. յորժամ ծնաւ յուսվայնէ մօր իւրոյ ելանել։

Եդի նմա զմէգ 'ի հանդերձ. և մարմնոյդ նմա 'ի խանձարուրս։

Եդի նմա սահմանս՝ եդեալ փական և դրուն։

Ասացի. ցայդ վայր եկեսցես, և այլ մի անցանիցես. այլ անդրէն 'ի քեզ խորտակեսցին ալիք քո։

Եթէ առ քե՞ւ կարգեցի զլոյսն առաւօտին արուսեակն ետես զկարգ իւր։

Հատանել 'ի վերայ թեւոց երկրի. թօթափել զամբարիշտս 'ի նմանէ։

Կամ թէ քո՞ առեալ զհոգն կաւ՝ ստեղծեր կենդանի, և խօսաւն եդիր զնա յերկրի։

Եւ մերժեցե՞ր զլոյսն յամբարշտաց. ըզբազուկս ամբարտաւանից խորտակեցե՞ր։

Հատեա՞լ իցես յակն ծովու. և ընդ հետս անդնդոց շրջեցա՞ր։

Բանայցի՞ն քեզ ահիւ դրունք մահու. բարձրանայ զժոխոց տեսեալ զքեզ սարսեսցի՞ն։

Խելամտո՞ւս իցես լայնութեան առ 'ի ներքոյ երկնից. ասէ՝ պատմեա՛ ինձ, որ-

չափ իցէ։

Զինչ երկիր իցէ՝ յորում լոյսն անգա-
նիցի, կամ զի՞նչ տեղի խաւարի։

Տանիցե՞ս զիս ի տահմանս նոցա եթէ
խելամո՞ւս իցես չաւղաց նոցա։

Թերեւս գիտիցե՞ս և ընդ այն ժամանա-
կս ծնեալ իցես. և թիւ աւուրց քոց բա-
զումք իցեն։

Երթեա՞լ իցես ի չտեմարանս ձեան. և
զգանձս կարկտի տեսեա՞լ իցես։

Համբարեա՞լ կայցէ քեզ ի ժամանակս
թշնամեաց. յոր մարտի և պատերազմի։

Ասա՛ելանիցէ եղեամն. կամ սրտեցի
հարաւ ի ներքոյ երկնից։

Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկ ան-
ձրեւոյ և զճանապարհ ամպրոպաց տեղ-
եալ յերկիր։

Ուր ոչ գոյ մարդ՝ յանապատ յանմարդի։
Յագեցուցանել զանկոխն և զանշէն, և
բուսեցուցանել զբոյս դալարոյ։

Ո՞ է հայր անձրեւի. և ո՞վ է՝ որ ծնաւ
զշտապս ցօղոյ։

Ազօթք հանդերձ ծնրադրութեամբ
զամէր աղաչեացուք։

(Երից) կրկնեա։

Ընթերցուածս 'ի Յեսուայ որդւոյ Նաւեայ Ա. Լ:

Եւ եղեւ յետ վախճանելոյն Մովսիսի ծառայի տեառն ասէր ընդ Յեսուայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսիսի և ասէ:

Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու և ամենայն ժողովուրդ քո, յերկիր զոր ես տաց որդւոցն Իսրայելի:

Յամենայն տեղիս յոր հասանիցեն գնացք ոտից ձերոց՝ ձեզ տաց զնա՝ որպէս խօսեցայ ընդ Մովսիսի:

Զանապատն և զԼիբանանէն, մինչեւ ցգետն մեծ՝ ցգետն Եփրատ. զամենայն երկիրն Գեթացւոց մինչեւ ցծովն վերջին, ի մտից արեւու ձեզ լիցին սահմանքն:

Եւ ոչ ոք կացցէ ընդդէմ ձեր զամենայն աւուրս կենաց քոց:

Եւ որպէս էի ընդ Մովսիսի՝ նոյնպէս եղէց և ընդ քեզ. և ոչ թողից զքեզ և

ոչ. անտես արարքից զքեզ։

Զօրացի՛ր և քաջ լեր. զի դու բաժանեցեալ ժողովրդեանդ այրմիկ զերկիրն՝ զոր երդուայ հարցն քոց տալ զոցա։

Արդ զօրացի՛ր և քաջ լե՛ր յոյժ. պահել և առնել բան ամենայն օրինացն որպէս պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի՛ խոտորիցիս ի նոցանէ յաջ կամ յահեակ. զի խելամուտ լիցիս ամենայնի զինչ և գործեցես։

Եւ մի մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ. և խոկացես ի գա ի տուէ և ի գիշերի՝ զի իմացիս առնել զամենայն զբեալսդ ի գրա. և ապա յաջողեցայս և ուղղեցես զճանապարհս քո. և ապա խելամուտ լինիցիս։

Ահա պատուիրեմ քեզ. զօրացիր և քաջ լեր. մի զանգիտիցես, և մի երկնչիցիս՝ զի ընդ քեզէ Տէր Աստուած քո յամենայն տեղիս ուր և երթայցես։

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ զտէր ողորմեցուք։

(Երիցս) կրկնեա։

Ընթերցումն յերեսփոխ մարգարէի։
(Մարգ. Երեմ. Գլ. ԼԱ. 31։)

Ահաւասիկ աւուրք գան, ասէ Տէր և ուխտեցից տանն Իսրայէլի և տանն Յուդայի ուխտ նոր։

Ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում էառի զձեռանէ նոցա՝ հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց։ զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անհոգեի զարարի զնոցանէ, ասէ Տէր։

Այլ այսպէս ուխտն՝ զոր ուխտեցից տանն Իսրայէլի։ յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տաց զօրէնս իմ ի միտս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնոսա։ և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ։

Եւ մի ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր իւր, և իւրաքանչիւր զեղբայր իւր ասել թէ ծանիր զՏէր։ զի ամենեքեան ծանիցեն զիս ի փոքրկանց նոցա մինչև ի մեծամեծս, ասէ Տէր։ զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա և զմեղս նոցա ոչ եւս յիշեցից։

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ զՏէր ողորմեցուք։ (Երից) Կրկնեա։

ՀԱՍԱՍ

Ընթերցումն ի շարագրի թագաւորութեանց : Բ. Լ :

Եւ եկեալ ի վերացուցանել Տեառն զԵղիա շարժմամբ յերկին. և գնացին Եղիա և Եղիսէ ի Գալգալայ :

Եւ ասէ Եղիա ցԵղիսէ. Նիստ զա՝ զի ինչ զի մինչև առաքեաց զիս ի Բեթել :

Եւ ասէ Եղիսէ. Կենդանի է տէր. և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ :

Եւ եկին ի Բեթէլ :

Եւ ելին որդիք մարգարէիցն՝ որ ի Բեթէլ՝ առ Եղիսէ, և ասէ ցնա. Եթէ գիտացե՞ս զի այսօր առնու Տէր զտէրդ ի գլխոյ քումմէ : Եւ ասէ. գիտեմ և ես, լուռ լերուք :

Եւ ասէ Եղիա ցԵղիսէ. Նիստ զա՝ զի ինչ զի մինչև առաքեաց զիս յԵրիքով :

Եւ ասէ. Կենդանի է տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ : Եւ եկին

յերիքով։

Եւ մատեան մարգարէին որ յերիքով՝ առ Եղեոէէ, և ասեն ցնա. թէ գիտիցե՞ս՝ զի այսօր առնու տէր զտէրդ ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ. գիտեմ և ես լուռ լերուք։

Եւ ասէ ցնա Եղիա. նի՛ստ դու աստ. զի տէր առաքեաց զիս ի Յորդանան։

Եւ ասէ Եղիսէէ. կենդանի է տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ։

Եւ երկոքեան գնացին. և յիսուն այր յորդւոց մարգարէիցն. և կացին ի հանդիպոջ ի բացեայ. և երկոքին կացին յերկերն Յորդանանու։

Եւ առ Եղիա զմաշկեակն իւր և ծալեաց և եհար զջուրն. և բաժանեցաւ ջուրն յայս կոյս և յայն կոյս. և անցին երկոքեան ընդ ցամաք։

Եւ եղեւ ընդ անցանելն նոցա. ասէ Եղիա ցեղիսէէ, խնդրեա զինչ արարից քեզ մինչեւ վերացեալ իցեմ ի քէն։

Եւ ասէ Եղիսէէ. եղիցի կրկին ոգի քո ի վերայ իմ։

Եւ ասէ Եղիա. դժուարին խնդրեցեր.

բայց եթէ տեսանիցես. զխս յայմբառնոյ խմաստ ի քէն, եղիցի այնպէս. ապա թէ ոչ՝ մի՛ եղիցի։

Եւ նգիր միջոցս գնային նոքա, երթային և խօսէին. և ահա կրակ հրեղէն և երիվարք հրեղէնք անջրպետեցին ի մէջ երկոցունց. և վերացաւ Եղիա շարժմամբ յերկին։

Եւ Եղիսէ հայէր և ասէր. Հա՛յր, հա՛յր, կառք Իսրայելի և հեծեալք նոցա։ և այլ ոչ ետես զնս, և բռնեաց զհանդերձսն իւրսն և խորտակեաց զանոնս երկուս մասանց։

Եւ ետես զՅովրդանն. և բաժանեցան յայս կողմս և յայն կողմս. և անց Եղիսէ։

Իբրեւ տեսին որդիք մարգարէիցն. որք յԵրիքովայ ի հանդիպայն, և ասեն՝ հանգեաւ ոգին Եղիայի ի վերայ Եղիսէի, և եկին

ինգ առաջ նորա և երկիրպագին նմա ի վերայ երկրի։

Եւ ասեն ցնա. աշակերտքն ինչ ծառայս քո որպէս զօրութեան որք յիսուն երթիցեն և խնդրեսցեն զտէրն քո. զուցէ առ զնա Հոգի Տեառն, և ընկէց զնա առ Յորդանան. կամ ի վերայ միոյ ուրուք լերանց և կամ ի վերայ միոյ ուրուք բլրոց։ Եւ ասէ Եղիսէէ, մի առաքէք։

Եւ բռնադատեցին զնա՝ մինչեւ ամաչէր. ասէ. առաքեցէ՛ք։

Եւ առաքեցին յիսուն այր. և խնդրեցին զերիս աւուրս, և ոչ գտին զնա։

Եւ դարձան առնա. և նա նստէր յԵրիքով. և ասէ ցնոսա Եղիսէէ. ո՞չ ասացի ձեզ՝ թէ մի՛ երթայք։

Եւ ասեն որք քաղաքին ցԵղիսէէ. ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս ո՛ւրեք իսկ տեսանէ. և Ջուրքս չար. և երկիրս անպտուղ։

Եւ ասէ Եղիսէէ. առէք առ իս կուժ մի նոր, և դիք այդր. և բերին առ նա։

Եւ էլ Եղիսէէ յաղբիւր Ջուրցն, և ասէր

անդր աղ. և ասէ՝ այսպէս ասէ Տէր. բժշկեմ զքեզ զայսոսիկ. և մի եւս լիցի այսր մահ և անդաւակութիւն:

Եւ բժշկեցան ջուրքն մինչեւ ցայսօր ըստ բանին Եղիսէի, զոր խօսեցաւ:

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ զՏէր ապաշխարութիւն:

(Երից) կրկնեա:

Ընթերցուածս յԵզեկիէլէ մարգարէէ։

(Մարգ. Եզեկ. Գլ. Լէ. 1։)

Եւ եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն, և եհան զիս ոգւով Տեառն, և եդ զիս ի մէջ դաշտին, և այն լի էր ոսկերօք մարդկան. և շրջեցոյց զիս շուրջ զոսկերօքն, և ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին, և ցամաքեալք յոյժ։

Եւ ասէ ցիս. որդի մարդոյ, իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդոքիկ. և ասեմ, Տէ՛ր, Տէ՛ր, դու գիտես զայդ։

Եւ ասէ ցիս. որդի մարգոյ. մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդոցիկ, և ասասցես ցդոսա. ոսկերք ցամաքեալք՝ լուարո՛ւք զպատգամս Տեառն։

Այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերսդ ցայդոսիկ. ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի։

Եւ տացի ի ձեզ մարմին, և ածից ի վերայ ձեր մարմին, և ձգեցից՛ ի վերայ ձեր

մարմնի. և ասաց զոգի իմ ի ձեզ. և լինիցի կենդանութիւն, և ծանիջիք թէ ես եմ Տէր։

Եւ մարգարէացայ որպէս և հրամայեաց ինձ Տէր. և եղեւ բարբառ ի մարգարէանալն իմում, և ահա շարժումն. և մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս։

Եւ տեսի և ահա ջիլք և մարմինք արասէին, և ձգիւր ի վերայ նոցա մարմնի, և շունչ ոչ զոյր ի նոսա։

Եւ ասէ ցիս, մարգարեա՛ց, որդի մարդոյ, մարգարեա՛ց ի վերայ շնչոյն, և ասասցես ցշունչն. այսպէս ասէ Տէր Տէր. է՛կ, շունչ, ի չորից հողմոց, և փչեա ի մեռեալս յայսոսիկ և կեցցեն։

Եւ մարգարէացայ որպէս և հրամայեաց ինձ Տէր. և եմուտ ի նոսա շունչ և եղեն կենդանիք. և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովք բազումք յոյժ։

Եւ խօսեցաւ ընդ իս Տէր և ասէ. որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ՝ ամենայն տունդ Իսրայելի են. և դոքա ասեն. չորացան ոսկերք մեր, հատաւ յոյս մեր և մեռաք։

Վասն այդորիկ մարգարեաց և առաքելոց ցդուտս. այսպէս ասէ Տէր Տէր. ահաւասիկ ես բացից զգերեզմանս ձեր. և հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ, և տարայց զձեզ յերկիրն Իսրայելի:

Եւ ծանիջիք՝ թէ ես եմ Տէր, ի բանալն ինձ զգերեզմանս ձեր և հանել զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ:

Եւ տաց զոգի իմ ի ձեզ, և լինիջիք կենդանիք. և եդից զձեզ յերկրին ձերում և ծանիջիք թէ ես եմ Տէր. խօսեցայ և արարից ասէ Տէր Տէր:

Աղօթք հանդերձ ծնրադրութեամբ զՏէր աղաչեցուք:

(Երից) կրկնեա:

Ընթերցումն ի Դանիելէ մարգարէէ

(Մարգ. Դան. Գլ. Գ. Լ.)

Յամին ութներորդի նորոգութեանն արքայի՝ արար պատկեր ոսկի. բարձրութիւն նորա վեթասուն կանգուն, և լայնութիւն նորա կանգուն վեց և կանգնեաց զնա ի դաշտին Դէրայ յաշխարհին Բաբելացւոց։

Եւ արձակեաց ժողովել զզօրավարս և զօրագլուխս՝ և զկուսակալս զպետս և զբռնաւորս և զգործակալս և զամենայն իշխանս աշխարհաց գալ ի նաւակատիս պատկերին զոր կանգնեաց արքայն նաբուգոդոնոսոր։

Եւ ժողովեցան կուսակալք, զօրավարք և զօրագլուխք՝ պետք և բռնաւորք, մեծամեծք, գործակալք և ամենայն իշխանք աշխարհաց, գալ ի նաւակատիս պատկերին զոր կանգնեաց արքայն նաբուգոդոնոսոր. և կային առաջի պատկերին՝ զոր կանգ-

նեաց արքային նարուգոդոնոսոր։

Եւ քարոզ կարդայր զօրութեամբ և ամենայն ձեզ ասի, ազգ և ազինք և լեզուք։

Յորժամ լսիցէք զձայն փողոյ, սրնգի, թմբկի և քնարի և տաւղի և երգոց միաբանութեան, և ամենայն ազգաց արուեստականաց. անկանիջիք և երկիր պագանիջիք պատկերին, զոր կանգնեաց նարուգոդոնոսոր արքայ։

Եւ որ ոչ անկեալ երկիր պագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։

Եւ եղեւ իբրեւ լուան ազգք զձայն փողոյն, սրնգին, տաւղի և նուագարանաց և ամենայն ազգաց արուեստականաց՝ անկանէին ամենայն ազգք և ազինք և լեզուք և երկիր պագանէին պատկերին ոսկւոյ, զոր կանգնեաց արքայն նարուգոդոնոսոր։

Յայնժամ մատեան արք քաղդէացիք՝ և եղեն չարախօս զհրէից առ նարուգոդոնոսոր և ասեն. արքայ, յաւիտեան կեա՛ց։

Դու հրաման եատուր ամենայն մարդոյ՝ զոր լսիցէ զձայն փողոյ և սրնգի եւ քնարի եւ տաւղի եւ նուագարանաց, եւ ամենայն ազգաց արուեստականաց։

Եւ որ ոչ երկիրպագանիցէ պատկերին սակաւ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Արդ՝ են սատ արք հրէայք՝ զորս կա-ցուցեր ի վերայ գործոց աշխարհիս բա-բելացւոց, սեղրաք, միսաք և աբեդնա-գով; որք ոչ հնազանդեցան հրամանի քում՝, արքայ, և զքեզ քո ոչ պաշտեն, և պատկերիդ սակաւ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։

Յայնժամ նարտ զոգոնսոր պրամա-թիեամբ և բարկութիեամբ հրամայեաց տա-ծել զսեդրաք, զմիսաք և զաբեդնագով. և ածին առաջի թագաւորին։

Պատասխանի եւ նարտ զոգոնսոր և ասէ ցնոսա. թէ, արդարեւ սեդրաք, միսաք և աբեդնագով, զքեզ քո՞ ոչ պաշտէք, և պատկերին սակաւ՝ զոր կանգնեցի, երկիր ոչ պագանիցէք։

Բայց արդ եթէ պատրաստք լինիցիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոց, արնդի և թմբկի եւ քնարի, եւ զմխարանաւ թխանամեանց ազգաց արուեստակցանաց, անկանիցիք և երկիրպագանիցէք պատկերին զոր արարի. ապա թէ ոչ պագանիցէք երկիր, ի նոյն ժամու անկցիք ի հնոց

հրոյն բորբոքեալ. և ոչ է աստուած որ
փրկէսցէ զձեզ ի ձեռաց իմոց։

Զաստուածդ եռան սերբոյս, միրաք և
սրեկնագով, և ասեն ցարքայ նորա զա-
գանաց...

Յայնժամ նորա զարհուրս ի երե-
սամբեալքն, և զոմն երեսաց նորա
շրջեցաւ ի վերայ սերբոյս, միրաքայ և
սրեկնագովն, և ասէ. Վասուցէ՛ք զհնոյն
եօթնագաստակ՝ զի մինչև ի վախճան սա-
բեսցին։

Եւ սրք հինգ զօրաւորք՝ զօրութեամբ՝
կապեսցեն զսերբոյս, զմիրաք և զսրեկ-
նագով՝ արկանել ի հնոց հրոյն բորբոքե-
լոյ։

Յայնժամ սրքն այնոքիկ կապեցան
զամենեսեանսն ի միրաքս, սրամբա-
բանքս և զանկապանսն բերեալ, և ար-
կին ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ։

Զի հրաման թագաւորին սաստկանայր,
և հնոցն բորբոքիր եօթնագաստակ սա-
տել յոյժ։

Եւ երեքին նոքա՝ սերբոյս, միրաք և
սրեկնագով անկան ի մէջ հնոցին կապ-

նալք։

Եւ գնային ի մէջ հրոյն, օրհնէին և գովէին զաստուած։

Յարեան ազարիա եկաց յաղօթս այսպէս. երաց զբերան իւր ի մէջ հրոյն և ասէ...

Եւ ո՛չ զարարէին՝ որք արկին զնոսա ապատուորք թագաւորին՝ զհնոցն բորբոքելոյ նաւթիւ և ձիթով և վշտով և արթով։

Եւ եմանէր զիրգանայր բոցն ի վերայ քան զհնոցն ի քառասուն և յին կանգուն։

Եւ շրջէր ապատէր շուրջ զհնոցառն, եւ այրէր զորս գտանէր ի քարդէացւոց անուտ։

Եւ հրեշտակ աստուծոյ էջ եկաց ընդ ազարիանան ի հնոցի անդ. և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի։

Եւ արար ի մէջ հնոցին իբրեւ զհովմ, որ ցօղագին շնչիցէ. և ոչ մերձանայր ամենեւին հուրն ի նոսա, ոչ տրտմեցուցանէր և ոչ նեղէր զնոսա։

Յայնժամ երգեան իբրեւ ի միոջէ բերանոց օրհնէին և գովէին և փառաւորէին զաստուած և ասէին։

Ոչինչ է պիտոյ վասն բանիդ այդ-
սիկ տալ քեզ պատասխան։

Զի է մեր Աստուած յերկինս՝ զոր մեք
պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոցէ
հրոյդ բորբոքելոյ, և ի ձեռաց քոց ար-
քայ՝ ապրեցուցանել զմեզ։

Այլ թէ ոչ՝ այսինչ յայտնի լիցի քեզ,
արքայ, զի քո մեք ոչ պաշտեմք, եւ
պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր
ոչ պագանեմք։

Օրհնեալ են Տէր Աստուած հարցն մերոց
գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտ-
ենեան։

Զի արդար են յամենայնի գործք քո՝ ճշմա-
րիտ են, և ուղիղ են ճանապարհք քո՝ և ա-
մենայն դատաստանք քո ճշմարտութիւն։

Եւ իրաւունս ճշմարտութեան տարեր բոլոր ամենայնի զոր տարեր մեզ. և քարոզքին որոյ հարցն մերոց Երուսաղէմի. զի ճշմարտութեամբ՝ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեզաց մերոց։

Զի մեզաք՝ և անօրինեցաք ապստամբ լինել ի քէն և առաւել մեզաք յամենայնի։

Եւ պատուիրանաց քոց ո՛չ անուացաք, ո՛չ պահեցաք՝ և ո՛չ տարաք որպէս պատուիրեցեր մեզ՝ զի բարի լինիցի մեզ։

Եւ զամենայն՝ զոր ածեր ի վերայ մեր, և զամենայն զոր տարեր մեզ՝ արդար դատաստանաւ տարեր։

Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց և ապստամբողաց, և թագաւորի՝ անիրաւի և չարի քան զամենայն երկիր։

Եւ արդ՝ ո՛չ դոյ մեզ բանալ զբերան՝ զի ամօթ և նախատինք եղեաք ծառայից քոց և պաշտօնէից։

Այլ մի մատներ զմեզ խապտա վասն անուան քոյ. և մի ցրեր զուխտս քո։

Եւ մի ի բացեայ առներ զողորմութիւնս քոյ ի մէնջ. վասն Աբրահամու սիրելւոյ քո՝ և վասն Իսահակայ ծառայի քո և վա-

եղեն Իսրայելի սրբոյ քո։

Որոց խօսեցար բազմացուցանել զզաւակ նոցա իբրեւ զաստեղս, երկնից և իբրեւ զաւազս առ ափն ծովու։

Եւ արդ Տէ՛ր, նուազեցաք քան զամենայն ազգս. և եմք տառապեալք յամենայն երկրի. այսօր վասն մեղաց մերոց։

Եւ ո՛չ գոյ ի ժամանակի յայսմիկ իշխան՝ մարգարէ՝ և առաջնորդ. ոչ ողջակէզք՝ և ո՛չ զոհք և ո՛չ պատարագք՝ և ո՛չ խունկք, և ո՛չ տեղի տալոյ երախայրեաց առաջի քո։

Եւ զառանել զողորմութիւն ի քէն այլ անձամբք բեկելովք՝ և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք։

Իբրեւ զողջակէզս խոյոց՝ և զաւակաց՝ և իբրեւ զբիւրաւորս զառանց պարարաց, այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո. լինել կատարեալ զկնիս քո, զի չիք ամօթ յուսացելոց ի քեզ։

Եւ արդ՝ զամբ զհետ քո ամենայն սրտիւք մերովք. և երկնչիմք ի քէն եւ խնդրեմք զերեսս քո։

Մի յամօթ առներ զմեզ, այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութեան քում. և ըստ բա-

զում ողորմութեան քում։

Եւ փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց և տուր փառս անուան քում Տէր։

Եւ փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց և տուր փառս անուան քում Տէր։

Եւ յամօթ լիցին ամենեքեան՝ ոյք ցուցանեն չարիս ծառայից քոց։ և ամաչեսցին յամենայն բռնութենէ իւրեանց։ և զօրութիւն նոցա խորտակեսցի։

Եւ ծանիցեն զի քո է Տէր Աստուած միոյն։ և փառաւորեալ ի վերոյ ամենայն երեսաց։

Օրհնեա՛լ է Տէր Աստուած հայրն մերոյ։ զովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց։ զովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ է ի տաճարի փառաց սրբութեան քոյ։ զովեալ՝ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ է ի վերոյ աթոռոյ արքայութեան քո։ զովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ է որ հայիս յանդունդս և

նոսրս ի քերովբէս. զովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Օրհնեալ ես ի վերոյ հաստատութեան երկնից. զովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

ՕՐՀՆԵՑԷ՛Ք ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք՝ և բարձր արարէք զնա յաւիտեան։

Օրհնեցէք քահանայք զՏէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Օրհնեցէք Անանիա՝ Ազարիա՝ և Միսայէլ զՏէր. օրհնեցէք՝ եւ բարձր արարէք զնա յաւիտեան։

Զի փրկեաց զմեզ ի դժոխոց՝ եւ ի ձեռաց մահու ազատեաց զմեզ. եւ փրկեաց զմեզ ի հնոցէս եւ ի միջոյ բորբոքեալ բոցոյս. եւ ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ։

Գոհացարուք զՏեառնէ՝ զի քաղցրէ՝ զի յաւիտեանէ՝ ողորմութիւն նորա։

Օրհնեցէ՛ք ամենայն պաշտօնեայք Տեառն զԱստուածն աստուծոց. օրհնեցէք եւ գոհացարուք զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

ԾԻԾԱՏԱԿԱՐԱՆ

2n.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0063214

A I
18917